Azg
armenian daily
7 ԱՊՐԻԼ 1995. ՈՒՐԲԱԹ # 65 (819)

Կանադայում fուրդ-հայ-հույն ցույց Թուրքիայի դեմ

Թուրքիային զենք վաճառելու ծրագիրը բողոք է առաջացրել Կանադայում: Ապրիլի 7-ին ժամը 11-ին Մոնրեալի Քրդական մշակութային միությունը հունական եւ հայկական համայնքների եւ խնբեկցի համախոհների հետ մեկտեղ բողոքի ցույց է անցկացնելու Մոնրեալում: Կանադայի fրդական կոմիտեի վկայությամբ, ցույցի կազմակերպիչները դատապարտում են Թուրքիայի հարձակումը ՔԲԿ-ի դիրքերի վրա, որի հետեւանքով իրականում ամենից շատ տուժում են անմեղ fուրդ բնակչությունն ու փախստականները: Կանադայի կառավարությունը 39 ժամանակակից ինքնաթիռի վաճառքի ծրագրի մասին հայտարարել էր դեռ մեկ ամիս առաջ: Նման ինքնաթիռներով թուրքերը հարձակումներ են գործում fրդական գյուղերի եւ փախստականների ճամբարների վրա: Ցուցարարների վրդովմունքն է առաջացրել նաեւ այն փաստը, որ Կանադայի ներքին գործոց նախարարը վերջերս հայտարարել է Թուրքիայի ժողովրդավարության 75-րդ տարեդարձին նախարարական հանձնախումբ ուղարկելու մասին: Բողոքի ցույցի կազմակերպիչների կարծիքով Թուրքիայի ժողովրդավարության իրական դեմքն այն է, որ այդ երկրում բոլորից շատ լրագրողներ են բանտարկված, արգելված են fրդական թերթերը, իսկ fրդերի իրավունքները ոտնատակող fաղաքացիների ու իրավաբանների դեմ հածախակի հարձակումներ ու մահափորձեր են կատարում «անհայտ անձինք»:

ՈԱԿ

ՀՌԱԿ-ը շնորհավորում է Գարեգին Ա կաթողիկոսին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ս. Էջմիածին

Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության անունից շնորհավորում ենք Ձեզ Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու առթիվ: Հույս ենք հայտնում, որ Ձեր գահակալության ընթացքում ի կատար կածվեն Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միավորման, նրա հզորացման ու ազգօգուտ այլ ձեռնարկումների մասին Ձեր տված հավաստիացումները:

Խորին հարգանքով՝ ՀՌԱԿ Հանրապետական վարչություն

Հանդիպում ՀՌԱԿ գրասենյակում

Ապրիլի 6-ին ՀՌԱԿ Հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը ընդունեց ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ներկայացուցիչներ Քորին Լայդենին եւ Կիս Լենդերսոնին:

Հյուրերի խնդրանքով Ռուբեն Միրզախանյանը ներկայացրեց սահմանադրական գործընթացի, խորհրդարանական ընտրությունների եւ առհասարակ հանրապետությունում քաղաքական ընդդիմադիր ՀՌԱԿ դիրքորոշումները: Կարեւորվեց սահմանադրական գործընթացի լայն լուսաբանման եւ սահմանադրության նախագծի հրապարակային քննարկման ուղղությամբ համագործակցությունը: ■

ԱՊՀ միջխորհրդարանային ժողովը թերեւս կազմված կլինի 286 մարդուց

ՍՈՍԿՎԱ, 6 ԱՊՐԻԼ, ՈՒՍ ՍԼԱԲ. ԱՊՀ գործերի եւ հայրենակիցների հետ կապերի կոմիտեն Պետդումային դիմեց ԱՊՀ երկրների միջխորհրդարանային վեհաժողովի ընդհանուր կազմը 286 անձի հասցնելու առաջարկությամբ: Այդ հարցի առթիվ տարածված Պետդումայի որոշման նախագծում սահմանվում է նաեւ միջխորհրդարանային վեհաժողովում ԱՊՀ խորհրդարանների պատվիրակությունների ներկայացուցչության քվոտային կարգը: Ենթադրվում է, որ Ռուսաստանն այնտեղ կունենա 148, Ուկրաինան՝ 52, Ուզբեկստանը՝ 22, Ղազախստանը՝ 17, Բելառուսը՝ 10, Ադրբեջանը՝ 8, Վրաստանն ու Տաջիկստանը՝ 6-ական, Կիրգիզիան՝ 5, Հայաստանը, Մոլդովան եւ Թուրքմենստանը՝ 4-ական ձայն:

ԹԵՀՐԱՆ

Նախագիծ. Թուրքմենական գազը Իրանով Հայաստան

Իրանի, Հայաստանի եւ Թուրքմենստանի արտաքին գործերի նախարարների եռակողմ խորհրդակցություն տեղի կունենա շաբաթ օրը Իրանի մայրաքաղաքում: Ինչպես ադրիլի 6-ին հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, վկայակոչելով ԻՌՆԱ գործակալությանը, հանդիպման մասնակիցները կքննարկեն երեք պետությունների միջեւ տնտեսական համագործակցության եւ առեւտրի զարգացման հարցերը:

Այս խորհրդակցության անցկացման որոշումը կայացվել էր մարտի կեսերին Իրանի, Հայաստանի եւ Թուրքմենստանի նախագահների կողմից, որոնք մասնակցել են Իրանի հարավում Բենդեր-Աբաս-Բաֆկ երկաթուղու բացման արարողությանը: Իրանա-հայ-թուրքմենական տնտեսական համագործակցության բնագավառում գլխավոր շեշտը կդրվի էներգետիկայի վրա: Խորհրդակցության մասնակիցները կքննարկեն թուրքմենական բնական գազը Իրանի տարածքով Հայաստան առաքելու նախագիծը:

Ինչպես հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, աչքի է զարնում Ադրբեջանի բացակայությունը առաջադիմական տարածաշրջանային տնտեսական դաշինքում: Իրանա-ադրբեջանական հարաբերությունները նկատելիորեն վատթարացել են Կասպից ծովի հատակից նավթի արդյունահանման կոնսորցիումի կողմից Իրանի ազգային նավթային ընկերությանը որոշես անդամ ընդունելուց հրաժարվելուց հետո:

Ադրիլի 6-ին «Էտելաաթ» թերթը Բաքվին մեղադրել է Իրանի հանդեպ դարտավորությունների խախտման մեջ, որին Ադրբեջանը խոստացել էր այդ կոնսորցիումի մասնակցության 5 տոկոսանոց բաժինը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Նախապատրաստություն գահակալության արարողությանը

Վեհափառը կարեւորում է սոցիալական վիճակը

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 6 ԱՊՐԻԼ: Ծաղկազարդի օրը, առաջիկա կիրակի, ադրիլի 9-ին, Ս. Էջմիածնում տեղի կունենա Ամենայն հայոց նորընտիր կաթողիկոսի գահակալության արարողությունը: Մայր տաճարում տեղի ունենալիք արարողություններին կմասնակցեն բազմաթիվ հյուրեր, այդ թվում՝ ոչաբոնական ներկայացուցիչներ աշխարհի եկեղեցիներից: Գարեգին Ա կաթողիկոսը կմատուցի Ս. պատարագ, որի ավարտին տեղի կունենա նրա գահակալման արարողությունը:

Արարողությանը ներկա գտնվող հյուրերի շարքում կլինեն, մասնավորապես, Վատիկանից կարդինալ Կասպերին, Ռուս ուղղափառ եկեղեցու Ֆիլարետ արքեպիսկոպոսը, Հունաց տիեզերական պատրիարքի անունից Ժենեւի եպիսկոպոս առաջնորդը, Երուսաղեմի եկեղեցու Մարկոս պատրիարքը, դոյտիների Շենուդա պատրիարքի ներկայացուցիչը, Ասորեստանի եկեղեցու Մարի Էմմանուել պատրիարքի ներկայացուցիչ Լիբանանի ասորիների առաջնորդ Իգնատիոս արքեպիսկոպոսը:

Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական մյուս աթոռների շարքում արարողություններին ներկա կլինեն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության պատվիրակությունը, որը բաղկացած կլինի Եփրեմ արք. Թաբաքյանից, Արտավազդ արք. Թրբոյանից, Կոմիտաս եպս. Օհանյանից, Ազգային ժողովի ատենապետ Խաչիկ Պաղտիկյանից եւ ատենադպիր Ռուբենեան Արզումանյանից:

Նորընտիր Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն Ս. Էջմիածնի վեհարանում շարունակում է ընդունել Ազգային-եկեղեցական ժողովին մասնակից բեմերի պատգամավորներին, որոնք իրենց շնորհավորանքի խոսքից զատ, Վեհափառ Հայրապետին տալիս են իրենց հետաքրքրող հարցեր: Մասնավորապես, երեկ ԱՄՆ Արեւմտյան բեմի եւ Կանադայի բեմի պատգամավորների հետ հանդիպման ընթացքում քննարկվել է եկեղեցու միության հարցը: Վեհափառ հայրապետը նշել է, թե դա ժամանակի ընթացքում լուծվելիք հարց է, եւ պետք չէ ճնշում բանեցնել: Գարեգին Ա. Վեհափառը նշել է, թե ինքը ի վերջո որեւէ խոսքով չի գտնվել, այժմ ինչպես կարող է այդ խնդիրը լուծել. Վեհափառը պատասխանել է, թե հայ եկեղեցին այժմ շատ այլ ցավեր ունի: Դա ե՛ւ հոգեւորականների պատրաստությունն է, եւ ժողովրդի անորի վիճակը, եւ Ղարաբաղում անհրաժեշտ օժանդակություններ, աղանդների հարցը: Միության խնդիրը, ըստ Վեհափառի, երկրորդ ոլանի վրա է, թեեւ ինքը կշարունակի այդ ուղղությամբ աշխատել՝ ակնկալելով ժողովականների եւ առաջնորդների աջակցությունը:

Մինչ ամբողջ աշխարհի հայության ուշադրությունն անցկացող օրերին սեւեռված էր Ս. Էջմիածնի վրա, որտեղ Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունն էր տեղի ունենում, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության մեջ ներկայիս պատրաստություններ են տեսնվում բավարար մնացած Արոռի հարցը քննարկելու համար: Ներկայումս Ս. Էջմիածնում գտնվող Անթիլիասի միաբանության անդամներից Եփրեմ արք. Թաբաքյանը առաջիկա երկուշաբթի օրը Խմբնի Լիբանան եւ իր հետ կտանի նոր ընտրված կաթողիկոսի «պատրաստական հրամայականը» Կիլիկիոյ աթոռից: Անթիլիասում ներկայիս՝ պատրաստություններ են տեսնվում Տանն Կիլիկիոյ կրոնական եւ քաղաքական ժողովների միացյալ նիստ հրավիրելու ուղղությամբ, ընտրելու համար կաթողիկոսական տեղապահին:

ՀԱՄԱՌՈՏ

Հունաստանը դատապարտեց Թուրքիային

ԱԹԵՆՔ, 6 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Որոշ աղբյուրների համաձայն, Հունաստանի կառավարությունը դատապարտել է Հյուսիսային Իրլանդիայում fրդերի դեմ ուղղված Թուրքիայի ագրեսիան եւ պահանջել է այդ հարցը ներկայացնել եւրամիության արտգործնախարարների խորհրդի քննարկմանը: Հունաստանի կառավարության ներկայացուցիչ Եվանգելոս Վենիզելոսը ընդգծել է, որ ադրիլի 5-ին թուրքական զինվորների սպանած յոթ fրդերի թաղման ժամանակ թուրքերի ու fրդերի միջեւ նոր բախումներ են սկսվել: Դրանց հետեւանքով սպանվել է չորս fուրդ:

Լիբիան մտադիր է դուրս գալ ՄԱԿ-ից

Լիբիայի հեղափոխության ղեկավար Մուամար Քադաֆին հայտարարել է, որ իր երկիրը քննարկում է միավորված ազգերի կազմակերպությունից դուրս գալու հնարավորությունը: Ադրիլի 6-ին «Նյու Յորք թայմս» թերթում հրապարակված հարցազրույցում Լիբիայի ղեկավարը հաստատել է, որ ՄԱԿ-ը լիովին վերահսկում է մեծ տերությունների կողմից: «Դժբախտաբար անցել են այն ժամանակները, որ այդ կազմակերպությունը օգուտ էր բերում, ասել է նա: Մենք կոչ ենք անում բոլոր փոքր պետություններին բողոքել ՄԱԿ-ը, եւ ստեղծել իրենց միջազգային կազմակերպությունը»: Մուամար Քադաֆին հայտարարել է նաեւ, որ իր երկիրը մտադիր չէ այլեւս հաշվի առնել Լիբիայի հետ օդային հաղորդակցության վրա դրված ՄԱԿ-ի արգելքը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Մայրության եւ գեղեցկության տոն

Այսօր ադրիլի 7-ն է, մայրության եւ գեղեցկության տոնը: Ծաղկման եւ փրթումի տոն, երբ նաս մեկ անգամ ցիկ մնան նրանք:

Այս առթիվ մասնավորապես ու հատկապես շնորհավորում ենք մեր

մայրանում է մայր բնությունը, փրթում, գեղեցկանում, մայրանում են մեր կանայք, մեր մայրերը: Սիրենք, հարգենք, պատսպարենք նրանց, գուրգուրենք նրանց, նրանք մեր մայրերն են, մեր զավակների մայրերը: Թող միշտ ժպտան, երջանիկ, գեղեցիկ մնան նրանք:

Ադրիլի 7-ը ոչ աշխատանքային օր

ԵՐԵՎԱՆ, 6 ԱՊՐԻԼ, ՏՆԱՐԲ: Ադրիլի 7-ը Մայրության եւ գեղեցկության օրը, որը Հայաստանում նշվում է Մարտի 8-ի Կանանց ավանդական միջազգային օրվա փոխարեն, պատշաճաբար հայտարարված է ոչ աշխատանքային օր: Այդ որոշումն ընդունել է ՀՀ Գերագույն խորհուրդը 1994 թ. մարտի 30-ին:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԿԱՐԳԱԿՈՐՈՒՄ

ԵԱՀԿ-ն հաստատեց, որ իսկամարտության հիմնական կողմերը երեխն են

Ե ԱՀԿ Բուդապեշտյան գագաթաժողովի ընդունած փաստաթղթերի համաձայն, Լեռնային Ղարաբաղը ճանաչվում էր որպես իսկամարտության լիարժեք կողմ: Ու թեեւ այդ մասին կոնկրետ չէր նշվում, այնուհանդերձ, դա էր ցույց տալիս փաստաթղթի տրամաբանությունը: Եւ Հայաստանը, եւ Լեռնային Ղարաբաղը հենց այդպես էլ մեկնաբանում էին այդ նման լիազորություններ չտալ նաեւ հայ բոնազավթածների ներկայացուցչին:

Բուդապեշտյան գագաթաժողովից հետո Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովը հայտարարել էր, թե «գոյություն չունի որեւէ փաստաթուղթ, որտեղ գրված լինի, թե ղարաբաղյան իսկամարտությունն ունի 3 հիմնական կողմ»: Բայց ահա մարտի 30-31-ին Պրագում ԵԱՀԿ ներկայացուցիչների ներկայությամբ:

Այս փաստաթուղթն ապացուցում է, որ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի մեկնաբանություններ միանգամայն ճիշտ էին, մինչդեռ ադրբեջանական կողմը պարզապես փորձում էր ժամանակ շահել: Նման փաստաթղթի ընդունումը, անշուշտ, որոշակի առաջընթաց է այն առումով, որ այսուհետեւ ադրբեջանական կողմը ստիպված կլինի կամ խաղաղարար բանակցությունները տարալեցնել նոր առիթներ որոնել, կամ պարզապես ընդունել Ղարաբաղը որպես իսկամարտության լիարժեք կողմ եւ նստել բանակցությունների սեղանի շուրջ: Եւ այն, ինչ ամիսներ շարունակ պնդում էր հայկական կողմը, փաստորեն ընդունեց նաեւ ԵԱՀԿ-ն:

Նշանակո՞ւմ է արդյոք սա, թե առաջիկայում ադրբեջանական կողմը լրջորեն կնստի բանակցությունների սեղանի շուրջ: Հավանական է թե: Պարզ է մի բան շաս բան կախված է մայիսի 26-ին Մինսկում կայանալիք ԱՊՀ գագաթաժողովից, որտեղ վերջնականապես կլուծվեն մի շարք կարեւորագույն խնդիրներ, որոնք անմոդրակիորեն կապված են ղարաբաղյան խնդրի հետ: Եւ Ադրբեջանն ըստ երեւույթին կփորձի ձգձգել բանակցությունները մինչեւ այդ գագաթաժողովը դրանով իսկ ոչ միայն ԱՊՀ ինտեգրացիոն գործընթացին իր չմասնակցելը դատապարտելու, այլեւ Ռուսաստանի դեմ «հակակայսերական» պայքարի դրոշակակրի կեցվածք ընդունելու եւ դրանով իսկ Արեւմուտքի աջակցությունը ստանալու նպատակով:

ԱՐՄԵՆ ԲԱԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Հայաստանը կողմ է միջուկային զենքի տարածման արգելքի մասին պայմանագրի երկարաձգմանը

Ս.թ. ապրիլին Նյու Յորքում կայանալու է միջուկային զենքի տարածման արգելքի մասին պայմանագիրը երկարացնելուն նվիրված կոնֆերանս: Պայմանագիրը կնքվել էր 1970թ.-ին՝ 25 տարով: Միջուկային երկրները առաջարկում են այն երկարաձգել 25 տարով կամ դարձնել հավիտենական: Բայց որոշ ոչ միջուկային երկրներ դրան դեմ են: Օրինակ, եգիպտոսը եւ այլ մուսուլմանական երկրներ ասում են, որ չեն ստորագրի, քանի դեռ չի ստորագրել Իսրայելը, որը չճշտված տվյալներով այդպիսի զենք ունի: Իսկ պայմանագրի երկարաձգման համար պետք է կողմ լինեն այն արդեն ստորագրած երկրների (մոտ 170 երկրներ) առնվազն կեսը: Հայաստանի դիրքորոշումը տվյալ հարցում դրական է՝ այս մասին «Նոյյան տապան» գործակալությանը հայտնեց ՀՀ նախագահի մամլո քարտուղարի պաշտոնակատար Լեւոն Զուրաբյանը:

ԼՏ

Սահմանվել է բնակչության էներգաապահովման նոր կարգ

ԵՐԵՎԱՆ, 6 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ- ՀՀ էներգետիկայի եւ վառելիքի նախարար Միրոն Շիրմանյանի հրամանագրով սահմանվել է բնակչությանը էլեկտրաէներգիայի մատակարարման նոր կարգ:

Ինչպես Սնարքին հայտնեցին նախարարության մամլո կենտրոնում, հրամանագրին համապատասխան էլեկտրամատակարարման օրական նվազագույն նորման կկազմի 2 ժամ, իսկ արտակարգ պայմաններում՝ մեկ ժամ: Նախատեսվում է նաեւ անջատումների անհատական կարգ:

Վճարման ասպիճանի համեմատ նախատեսվում է էլեկտրաէներգիայի լրացուցիչ մատակարարում: Այն կբաշխվի հետեւյալ կերպ.

Վճարումների տոկոսը	էլեկտրաէներգիայի մատակարարումը (ժամերով)
50	4
60	6
80	10
100	12

Բնակչության հետ հաշվարկները կիրականացվեն խնայբանկերի միջոցով: էլեկտրաէներգիայի մատակարարման համար պատասխանատվություն են կրում շրջանային էլեկտրացանցերը, իսկ ընդհանուր էներգահամակարգի համար՝ «Հայէներգո» պետական ձեռնարկությունը:

Ղարաբաղի բոլոր կանայք ապրիլի 7-ին կստանան 2000 դրամ օգնություն

ԼՂՀ կառավարությունը որոշում է ընդունել Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ կանանց միանվագ օգնություն ցույց տալու մասին: Որոշվել է թույլատրել բյուջետային հիմնարկությունների ղեկավարներին եւ ԼՂՀ աշխատանքի եւ սոցիալական ապահովության պետվարչությանը ապրիլի 7-ի առթիվ աշխատող, ինչպես նաեւ չաշխատող բոլոր կանանց միանվագ օգնության կարգով հատկացնել 2000 դրամ: Հանձնարարել է կոնոմիկայի եւ ֆինանսների նախարարությանը ապահովել ֆինանսավորումը, երաշխավորել ստանալիքային եւ հասարակական հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին, ելնելով հնարավորություններից, կոլեկտիվում աշխատող կանանց ցույց տալ համապատասխան օգնություն:

ԼՏ

ՀՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խաղողագործությունը որպես ամենաեկամտաբեր ճյուղ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում մշակվել եւ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Խաղող» նպատակային համալիր ծրագիրը: Այն երկարաժամկետ է (մինչեւ 2005 թվականը) եւ ելնում է կոնկրետ հնարավորություններից ու հեռանկարներից: Ծրագրի նպատակն է նպաստել հանրապետության ամենաեկամտաբեր ճյուղերից մեկի զարգացմանը: Նախագծում վերլուծված է խաղողի արտադրության եւ վերամշակման ճյուղերի իրավիճակը մինչեւ սեփականաշնորհումը եւ դրանից հետո: Բնութագրված են արտադրող եւ վերամշակող սուբյեկտների միջեւ տնտեսական հարաբերությունները, սպասարկման, մասնագիտական ծառայությունների, գիտական հետազոտությունների իրականացման հնարավորությունները: Հետազոտվել եւ հաշվարկվել են խաղողի այգիների տարածքները, արտադրության ծավալները, սերմերի, վերամշակման, բարձր օգտագործման, պահպանման ու արտահանման ծավալները: Բացի դրանից մեկը նվիրված է ծրագրի իրականացմանը նպաստող պետական քաղաքականությանը, սերմերի, վերամշակման, իրացման պրոցեսում տնտեսական բարեփոխումների եւ անհրաժեշտ իրավական դաշտի ապահովմանը: Ծրագիրը մշակողները անդրադարձել են նաեւ արտադրության եւ վերամշակման բնագավառում պետական տեսչական վերահսկողության ձեւավորմանը, անհրաժեշտ նյութա-տեխնիկական եւ վառելիքաէներգետիկ միջոցների պահանջի բավարարմանը: Ծրագրում անհրաժեշտ ուշադրություն է դարձված նաեւ մասնագետներին, արտադրողներին գիտատեխնիկական ինֆորմացիայով ապահովմանը: Ներարկվում է ծավալել լայն դպրոցական ունեցող արտադրատեսակների (գինի, օղի, կոնյակ, հյութեր, չամիչ եւ այլն) սպասում եւ ներդրում: Անհրաժեշտ ուշադրություն է դարձված նաեւ վերահսկման տեղական, շրջանային ու հանրապետական մարմինների գործառույթներին: Լուսաբանված են ծրագրի իրականացման ֆինանսական միջոցների պահանջարկը, փոխհատուցման ժամկետները եւ տնտեսական արդյունավետությունը:

Ա. Գ.

ՀՅՈ ԳՈՐԾ

ՀՅԴ սիյոնֆահայ անդամներ, որոնց մուտքը Հայաստան արգելվել է

«Փաստ» լրատվական գործակալության տրամադրության տակ է հայտնվել մի փաստաթուղթ, որը ՀՀ արտգործնախարարությունը գաղտնի մակագրությամբ փետրվարի 23-ին ուղարկել է արտասահմանում գործող Հայաստանի դեսպանատներին: Այնտեղ ներկայացվում է այն անձանց ցուցակը, որոնց արգելվում է Հայաստանի մուտքի վիզա տալ: Արգելքը տարածվում է հետեւյալ անձանց վրա.

Հրայր Մարուխյան (ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ, Հունաստան), Հրաչ Տասնապետյան (ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ, Լիբանան), Բենո Թոնդրան (ՀՅԴ Բյուրոյի անդամ, Լիբանան), Տիգրան Նինոպոլյան (ՀՅԴ Բյուրոյի անդամ, Լիբանան, 4 տարի ապրել է Հայաստանում), Երվանդ Մոնոֆարյան (ՀՅԴ Բյուրոյի անդամ, Լիբանան), Երվանդ Փամբուքյան (ՀՅԴ Բյուրոյի անդամ, Լիբանան), Այբեր Աճեմյան (ՀՅԴ Բյուրոյի անդամ, Իրան), Վիգեն Հովսեփյան (ՀՅԴ Բյուրոյի անդամ, Կանադա), Արա Պողոսյան (ՀՅԴ Բյուրոյի անդամ, ԱՄՆ, 4 տարի ապրել է Հայաստանում), Հանրի Ասատրյան (թժիկ, ՀՅԴ անդամ չէ, ԱՄՆ), Կարո Արմենյան (ԱՄՆ, ՀՅԴ Արեւելյան շրջանի ԿԿ-ի անդամ), Հակոբ Բագրատունի (Լիբանան, ԿԿ-ի անդամ), Վաչե Բրուտյան («Ազատություն» օրաթերթի աշխատակից, ԱՄՆ), Վահե Գյուրջյան (ԱՄՆ, Արեւմտյան շրջանի Կ[illegible]-ի անդամ), Մարտիրոս Թոփալյան (ԱՄՆ «Հայ դատի» կենտրոնական գրասենյակի դատախազնաստ), Էդուարդ Հովհաննիսյան (ԱՄՆ, Ռուսաստան, Հայ-ռուսական համագործակցության ֆոնդի նախագահ), Վիգեն Հովսեփյան (ԱՄՆ, Արեւմտյան ԿԿ-ի անդամ), Կիրո Մանոյան (Կանադա, «Հորիզոնի» խմբագիր), Ջոն Մկրտչյան (ԱՄՆ, Բոստոն), Հրայր Պալյան (ԱՄՆ, Մարդու իրավունքների պաշտպանության փորձագետ), Հակոբ Պալյան (Ֆրանսիա, ԿԿ-ի անդամ), Հովսեփ Բարագյան (Հունաստան, «Ազատ օրի» խմբագիր), Վազգիկ Պետրոսյան (թժիկ, Իրան, 5 տարի ապրել է Հայաստանում), Նազարեթ Բերբերյան (Հունաստան, «Դրօշակ» թերթի խմբագիր), Սեղբ Բոյաճյան (ԱՄՆ, Արեւմտյան ԿԿ-ի անդամ), Հովիկ Սալիբա (ԱՄՆ, Արեւմտյանի շրջանի ԿԿ-ի անդամ), Թաթոյ Սոնենց Փափազյան (ԱՄՆ «Armenian Revue»-ի դատախազնաստ), Մուրսել Սողոմյան (ԱՄՆ, «Ազատություն» ռադիոկայանի հայկական խմբագրության տնօրեն), Խաչիկ Տեր-Գրիգորյան (Հայաստանի ԿԿ-ի անդամ, Իրան, 5 տարի ապրել է Հայաստանում), Հրայր Տեր-Թորոսյան (ՀՅԴ Լիբանանի ԿԿ-ի ներկայացուցիչ), Ժան Կոսակյան (ԱՄՆ, «Ասպարեզ» օրաթերթի խմբագիր):

Դեսպանատներին ուղղված այդ նամակի տակ դրված է ՀՀ ԱԳՆ քարտուղարության պետ Կ. Նազարյանի ստորագրությունը:

ՓԱՍՏ

ՎԱՆԱՁՈՐ

Անձրեւները հեղեղումներ են առաջացրել

Վերջին օրերի անընդմեջ անձրեւները հեղեղումների պատճառ դարձան: Քաղաքի ամբողջ տարածքը ողողվեց հարավային անտառապատերից հոսող անձրեւաջրերով: Ամենավտանգավորը Խնձորուտ թաղամասի Սասունցիների փողոցի մոտակա արհեստական ջրուղին էր, որը հեղեղների բերած տիղմից խցանվել էր, ջուրը դուրս էր եկել ափերից, հեղեղել շենքերը եւ սպառնում էր տնակային թաղամասին: Մարտի 3-ին Ուկրաինի «Տարոն 606»-ի կոմանդա տնտեսության վարչության աշխատակիցները սկսեցին պայքարը տարերքի դեմ: Միայն գիշերվա ժ. 3-ին հաջողվեց սանձել ջրերը:

Այդ օրը լարված էր ջրմուղ կոյուղու վարչության կոլեկտիվի համար: Վարված էր հատկապես Բազումի ջրի մաքրման կայանի գործունեությունը: Հարկ եղավ մեծ ծավալի աշխատանք կատարել բոլոր ջրատարների գլխամասային կառույցներում:

Հեղեղները սանձվեցին: Հաջորդ օրը վերոհիշյալ կոլեկտիվների հետ բարեկարգման կոմբինատը, հրշեջ ծառայությունը, շինարարական մի քանի այլ կազմակերպություններ լծվեցին տարերքի պատճառած հետեւանքները վերացնելուն:

ՀՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվի ապրիլի 14-ին, շաբաթ օրը, ժամը 10.00-ին (եւ այսուհետեւ ամեն շաբաթ նույն ժամին) կենտրոնական բանկի մոտ տեղի է ունենալու «Արմենիա» բանկի ավանդատուների հավաք՝ հետագա գործողությունների ճշգրտման եւ եղած գումարները տնօրինելու համար:

Բոլոր ավանդատուների ներկայությունը պարտադիր է:

ՏՆՕՐԵՆԱԿՈՒՄԸ

ՈՒՍԿՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Պետական եւ հասարակական
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խմբ. 562941, AT&T (7 8852) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային
ծառայություն / 581841
Էջը եւ տարածքները պատրաստվել են
Apple Macintosh
համակարգչային ծառայությամբ
«Ազգ» թերթի

LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՇՐՋԱՆ ԱՊՀ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԼՂՀ-ն ձեռնամուխ է եղել տնտեսական վերափոխումների

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 6 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ- Ինչը կյանքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անհրաժեշտ դարձրեց տնտեսական վերափոխումների իրականացումը: Բարեփոխումների հետագա ծգձգումը կխորացներ տնտեսական հիվանդությունները եւ կարող էր հանգեցնել սոցիալական լարվածության, ասաց ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, երեկ այստեղ բացելով հանրապետության կառավարության նախագահության նիստը: Ընդսմին նախագահն ընդգծեց, որ կենտրոնացված կառավարումից շուկայական տնտեսությանն անցնելու ընթացքում կարեւոր է հաւվի առնել տարածաշրջանում ստեղծված յուրահատուկ վիճակը, որը բնութագրվում է «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» բառերով:

Նիստում ելույթ ունենալով, ԼՂՀ վարչապետ Լեռնարդ Պետրոսյանը հայտնեց, որ կառավարությունը մշակել է ավելի քան 40 փաստաթղթից կազմված նախագիծ, որոնք կանոնակարգում են տնտեսավարման սուբյեկտների հարաբերությունները տնտեսության բարեփոխման պայմաններում: Նա նշեց, որ ԼՂՀում բարեփոխումների արդյունավետ ծավալման համար հարկավոր է ստեղծել համապատասխան օրենսդրական հիմք, ինչով կզբաղվի այժմ կազմավորվող նոր խորհրդարանը:

■ *Շուտով կգործարկվի Վրաստանը Ռուսաստանին կապող երկաթուղին: Հավատի աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն, մոտ ժամանակներս կգործարկվի Չեչնիայի տարածով անցնող այն երկաթգիծը, որը Ռուսաստանը կապում է Ադրբեջանի եւ Վրաստանի հետ:*

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Իրանը մեկուսացման նոր վտանգի առջեւ

Վերջին շրջանում զանգվածային լրատվական միջոցները հաճախ են անդրադառնում Իրանի Իսլամական Հանրապետության լիակատար մեկուսացմանը միտված Սպիտակ տան միջոցառումների նոր ալիքին, որն ըստ երեւույթին աղերսվում է մեր տարածաշրջանում Իրանի վարած բավականին ակտիվ քաղաքականության հետ:

«Վաշինգտոն պոստը» նշում է, որ նախագահ Քլինտոնի ազգային անվտանգության հարցերով խորհրդականները նշել են, որ քննարկումների ընթացքում արծարծվել են նաեւ ավելի կարծր առաջարկներ, սակայն որոշ նկատառումներից ելնելով, վերջնական հաստատման համար դրանք չեն ներկայացվել նախագահ Քլինտոնին:

«Ռոյթր» գործակալությունը, վկայակոչելով Սպիտակ տան խոսնակ Մայքլ Մաք-Քարրիին, նույնպես անդրադարձել է Սպիտակ տանը կայացած հատուկ նիստին:

Ավելի վաղ ԱՄՆ պետքարտուղար Վ. Քրիստոֆերն իր ելույթում նույնպես անդրադարձել է նշված նիստին եւ հույս հայտնել, որ այդ խորհրդակցությունում կմշակվեն ավելի վճռական ձեւեր Իրանի մեկուսացման համար: Այդ մասին հաղորդել է ԻՌՆԱ գործակալությունը:

Իսկ Իսրայելում կայացած Իրանի Իսլամական Հանրապետությանը նվիրված հատուկ սեմինարի ժամանակ, նույնպես տեղեկացնում է ԻՌՆԱ գործակալությունը, մասնակիցները հորդորել են Վաշինգտոնին թեհրանի դեմ կիրառել խիստ քայլեր եւ Իրանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ կիրառելու համար ստեղծել համաբնարհային կոալիցիա:

Գ. Ա.

ՀԱՄԱՌՈՏ

Կորել է Վրաստանի փոխարտգործնախարար Միխայիլ Ուկլեբան

ԹԲԻԼԻՍԻ, 6 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ-ՅԱՐ: Ապրիլի 5-ին անսպասելիորեն անհետացել է Վրաստանի արտգործնախարարի առաջին տեղակալ Միխայիլ Ուկլեբան: Ինչպես հայտնի դարձավ, առավոտյան նա հարազատից է տվել Վրաստանի հեռուստատեսությանը, որից հետո չի երեւացել ոչ աշխատավայրում, ոչ էլ տանը: Նախարարությունում նշանակված էին խորհրդակցություն եւ մի քանի պատասխանական հանդիպումներ: Ծառայակիցների պնդումների համաձայն, Ուկլեբան միշտ այլի է ընկել ճշտապահությամբ եւ չէր կարող աշխատանքի չներկայանալ առանց լուրջ պատճառի:

Պրիմորիեում հնարավոր են տարերային խռովություններ

Տեղի է ունենում Պրիմորիեի հանքագործների համընդհանուր գործադուլ: Պարտիզանսկ քաղաքի ածխադյունահանող հինգ ձեռնարկությունների ածխահատների բողոքի գործողությանը ապրիլի 6-ին միացել են հանքահատսացուցիչ ֆաբրիկան, ավտոբազան եւ երկաթուղին: «Պարտիզանսկուգոլ» հանքահորերի վարչության պետ Անատոլի Մասիքուսան ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի բրիգադի հետ զրուցելիս չի բացառել գործադուլի վերածումը հրկիզումներով տարերային խռովության: Ապրիլի 6-ին Մոսկվա է ժամանել Պրիմորիեի ածխահատների տարածային կոմիտեի նախագահ Պյոտր Կիրյասովը: Նա մտադիր է ձգտել հանդիպելու առաջին փոխվարչապետ Անատոլի Չուբայսի հետ ածխային արդյունաբերության հանգուցային հիմնախնդիրների լուծման համար: Պրիմորիեի երկրամասային դումայի նախագահ Իգոր Լեբեդինեցը հաստատել է տեղացի պատգամավորների մտադրությունը գործադուլի կոչ անելու անդրսիբիրյան մայրուղու եւ ծովային նավահանգիստների աշխատավորական կոլեկտիվներին:

ՍՐՍԵՆՊՐԵՍ

ՈՒՍԱՍՏԱՆ

Դուման կասեցրեց պետական հեռուստատեսության սեփականաշնորհումը

Պետական դուման ապրիլի 5-ին ընդունել է օրենք «Ռուսաստանի Դաշնությունում պետական հեռուստատեսության եւ ռադիոհաղորդումների [illegible] մակերեսությունների սեփականության հատուկ կարգի մասին», [illegible] կասեցնում է պետական հեռուստատեսության եւ ռադիոհաղորդումների սեփականաշնորհումը: Մինչեւ օրենքի ուժի մեջ մտնելը իրականացված սեփականաշնորհումը ճանաչվում է անվավեր:

Օրենքով կասեցվում է հեռուստատեսության առաջին հաճախականության ալիքի, ինչպես նաեւ արբանյակային հեռուստատեսության համակարգի օգտագործումը «Ռուսաստանի հասարակական հեռուստատեսություն» բաժնետիրական ընկերության կողմից:

Օրենքով կասեցվում է թույլատրագրերի հանձնումը. «Օստանկինո» պետական հեռուստատեսության եւ «Ռուսաստանի հասարակական հեռուստատեսության» միջեւ ունեցվածքի եւ հաղորդման ժամանակի բաժանման համար:

ՍՐՍԵՆՊՐԵՍ

ՆԱԿԹ

Ադրբեջանի բաժինը կիսով չափ կրճատվում է

«Կասպից ծովի նավթահանքերի մշակման միջազգային նավթային կոնսորցիումում Ադրբեջանի բաժինը նախատես կազմել է 20 տոկոս, եւ նա իրավունք ունի այն մինչեւ ամ ցանկանա, բայց համաձայնեցնելով կոնսորցիումի մյուս անդամների հետ», ապրիլի 6-ին Մոսկվայում Բիզնես ՏԱՍՍ-ին տված հարցազրույցի ժամանակ ասել է Ռուսաստանի «Լուկոյլ» նավթային ընկերության նախագահ Վագիտ Ալեքպերովը: «Առայժմ մենք այս հարցի շուրջ ոչ մի նյութ չենք ստացել Ադրբեջանի կառավարությունից: Երբ դա տեղի ունենա, մենք կուսումնասիրենք նյութերը եւ որոշում կոնսորցիումի անդամ կասենք մեր եզրակացությունը», ընդգծել է վերոհիշյալ ֆիրմայի նախագահը:

Ինչպես հայտնի է, ապրիլի 3-ին հայտարարվել է Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի կողմից կոնսորցիումում Ադրբեջանի բաժնի հինգ տոկոսը ամերիկյան «Էքսոն» ընկերությանը տալու, ինչպես նաեւ Թուրքիայի «Թերքիշ Փեթրոլեում» ընկերության բաժինը մինչեւ հինգ տոկոս ավելացնելու մասին, որը մինչ այդ հիրում էր բաժնեհոլովների 1.7 տոկոսը:

Մոսկվայում Ադրբեջանի դեսպանատանը հայտնել են, որ 1994 թ. վերջին բանակցություններ են վարվել հինգ տոկոսանոց բաժինը Իրանին հանձնելու մասին, սակայն այս հարցի շուրջ վերջնական համաձայնություն ձեւ չի բերվել: Այսպիսով, ներկայումս Ադրբեջանին բաժին է ընկնում նախագծի մասնակցության տասը տոկոսանոց մասը:

ՍՐՍԵՆՊՐԵՍ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լենինը ստալինիզմի հիմնադի՞րն է եղել

Ավարտին մոտեցող քսաներորդ դարի հիմնական քաղաքական եւ սոցիալական ուղղությունների վրա առավել մեծ ազդեցություն ունեցող անձնավորություններից «ամենաանբախանելին» երեւի Վլադիմիր Լենինն է, եւ նույնիսկ եթե ներկայումս նրա տեղն ու դերը պատմության մեջ արժեքորված է, քանի որ նրա ստեղծած պետությունը փլուզվել է, համենայնդեպս նրան որպես մարդու եւ մտածողի բնութագրելը դեռեւս այժմեական է մնում եւ հետաքրքրական: Այդ առնչությամբ ուշագրավ է վերջերս նրա մասին գրված եւ ԱՄՆում հրատարակված հատորի գրախոսականը, որը տպագրված է «Էկոնոմիստ» հանդեսում:

«Պարոն Վոլկոգոնովի գիրքը հարուստ է տպավորություններով եւ հետաքրքիր մանրամասնություններով, բայց ադաս՝ իր բացատրություններով: Այն գրված է հեքիաթորդային, ռուսական տեսանկյունով եւ հիմնականում երկու ուղղություն է զարգացնում. առաջին, որ Լենինը բոլորովին էլ չլինելով սոցիալիզմի ավելի լի բերալ ձեւի հիմնադիրը, իրա կանում ստալինիզմի ծնունդ տվողն է եղել, եւ երկրորդ, որ իր անհատականությամբ եւ փիլիսոփայական մտածողությամբ նա ընդհանրապես բնամարտ է վերաբերվել Ռուսաստանի շահերին»: Այսպիսի միտք է արտահայտում «Էկոնոմիստ» գրական բաժնի մեկնաբանը փետրվարի 24-ի համարում գրախոսելով Դմիտրի Վոլկոգոնովի 529 էջանոց «Լենին» գիրքը, որը վերջերս ԱՄՆում հրատարակել է «Ֆրի Պրես» հրատարակչությունը:

Գրքում վերոհիշյալ երկրորդ բեգը հիմնվում է Լենինի կողմից պետական ահաբեկչության, բանտարկության եւ մահապատժի վերաբերյալ օրենքների հաստատման վրա: Բոլշեւիկների ստեղծած Սահմանադիր ժողովի քվեարկությունը նվիրված հեղինակի նկարագրությունը ուղղակի ցնցող է: Այս կողմից, խորհրդածում է գրախոսը, եթե Լենինն այնքան դրագմատիկ էր, ինչքան հեղինակն է ցանկանում նրան ներկայացնել, այդ դեռ ոչ դիմագրավելու համար ստեղծված կազմությանը, նա պետք է որ հետեւողականորեն առաջ տաներ ՆԵՊ-ի, եւ արտաքին աշխարհի հետ 1921 թվին սկսված փոխզիջումային քաղաքականությունը: Նա մեջ է բերում անգլիացի հայտնի դիվանագետ Չերչիլի խոսքերն այն մասին, որ եթե Ռուսաստանի մեծագույն դժբախտությունը Լենինի ծնունդն էր, ապա երկրորդ դժբախտությունը Լենինի մահն էր: Նա չի գտնում, որ Լենինի հակառուսական տրամադրություններ ունենալու բեգը բացատրված է բավականաչափ տրամաբանական ձեւով, քանի որ գրքում բերված այն օրինակը, որ 1917-ին Շվեյցարիայից վերադառնալիս Լենինը ընդունել էր գերմանացիների օժանդակությունը, համոզիչ չէ: Չէ՞ որ այնուամենայնիվ դա չկանխեց Ռուսաստանի վրա վերջինիս հարձակումը:

Իրավաբան լինելով, Լենինը երբեմն էլ չի զբաղվել այդ մասնագիտությամբ, եւ ընդհանրապես աշխատանք չի ունեցել մինչեւ 1917 թվին իշխանության գալուն գալը: Վոլկոգոնովը նրան ներկայացնում է որպես «անհանգիստ, դաժան, ակնկալող եւ խոցահաղար» մարդու, սակայն նրա մանկության ու պատանեկության տարեգրության մեջ, ըստ հոդվածագրի, այդ բոլորը հաստատող ոչ բան կա: Մինչեւ իր ավագ եղբոր սպանությունը եւ հոր մահը նա բաց հանգիստ, բարեկեցիկ եւ գավառական կյանքով է ապրել:

Գրքում Վոլկոգոնովը [illegible] որպես էլ չի կարողանում սպասիչ կերպով պատասխանել պատմական շատ կարեւոր հարցին, թե այդ ինչպես եղավ, որ մի «ուսոպիստ պամֆլետիստ», որն ավելի քան մեկուկես տասնամյակ գտնվել է արտասահմանում, կարողացավ վերադառնալ իր երկիրը եւ ընդամենը մի քանի ամիսների ընթացքում ստեղծեց այնպիսի քաղաքական ապարատ, որը խլեց աշխարհի տարածության մեկ վեցերորդ մասը, եւ իր իշխանությունը հաստատեց այնտեղ: Նա եւ իր հաջորդները պետք է որ «իրենց երկիրը հասկացած լինեին» այնքան լավ, որ կարողանային այդքան երկար ժամանակ իրենց իշխանությունը պահել այնտեղ:

Միգուցե հեղինակը շատ մոտիկ է կանգնած «այդ առաջելին եւ նրա հանկարծակի վախճանին», խորհրդածում է հոդվածագիրը, «որպեսզի կարողանար ճշգրիտ ու անկողմնակալ գնահատական տալ բոլոր հարցերին: Այդ առումով արեւմուտքի ընթերցողները երեւի թե կգերադասեն կարդալ Լենինի ավելի երկար, բայց նաեւ ավելի հավասարակշռված կենսագրական պատումը, գրված Ռոբերտ Սերվիսի կողմից», գտնում է նա:

Վոլկոգոնովը նախկինում եղել է Լենինի եւ Ստալինի գաղափարների անսխալականության ջատագովներից, իսկ հետագայում դարձել է կենսագիր-քննադատ: Նրա գիրքը, համենայն դեպս, մի նեղդում է երբեմն առաջնորդի կյանքի ընդհանուր պատմության մեջ, եւ ըստ գրախնդասի, գրքի հեղինակը ճիշտ է հաստատելու այն միտքը, որ Լենինն իր մեջ հիանալի որեն զուգակցել է պատմական պարգեւ մի լավատեսությունը՝ իր համախոհների մասին ունեցած արտասովոր հոռետեսության հետ, քաղաքական կյանքին կատաղի նվիրվածությունը՝ երկար ամառային արձակուրդներ անց կացնելու իր նախասիրության հետ, ինչպես նաեւ պրագմատիկ ճկունությունը՝ համաշխարհային հեղափոխություն իրականացնելու իր անգիջող համառության հետ: Գրքում գաղափարվում է այն միտքը, որ նույնիսկ եթե նա որոշ հարցերում ճիշտ է կողմնորոշվել, այնուամենայնիվ ընդհանուր կանխագուշակումներում [illegible] սխալվել է:

ՏԱՇՔԵՆՏ

Խուզարկություն ուզբեկ ընդդիմադիր գործչի տանը

ՏԱՇՔԵՆԴ, 6 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ- Ուզբեկստանի «Ադոլաթ» ընդդիմադիր կուսակցության փոխնախագահ, «Բիզիմ» ժողովրդական շարժման նախագահության անդամ Իբրահիմ Բուրիեւի տանը խուզարկություն է կատարվել:

Ինչպես հայտնեց Բուրիեւի կինը, խուզարկության ընթացքում մի քանի ոստիկաններ հետաքրքրվել են ոչ թե բարդեղերով ու զենքով, այլ Բուրիեւի բրոշուրով ու գրքերով: Զգուշավոր են Ուզբեկստանում մարդու իրավունքների վիճակին վերաբերող ամերիկյան իրավապաշտպան մի կազմակերպության գրքույկը, Բուրիեւի նոթատետրերը եւ քաղաքական բնույթի մի քանի փաստաթուղթ ու ձեռագիր:

Բուրիեւի կնոջ կարծիքով, նրա ձերբակալության անմիջական պատճառն այն է, որ անցյալ տարվա դեկտեմբերին եւ այս տարվա հունվար-փետրվարին Բուրիեւը Մոսկվայում, մամլո ասուլիսներում եւ ռադիոյով մի քանի անգամ հնչեցրել է Ուզբեկստանի ներկայիս իշխանություններին: Ինչպես ասում էր ինքը Բուրիեւը, «Ադոլաթ» ընդդիմադիր կուսակցության ստեղծմանն ի պատասխան իշխանությունները այլընտրական կուսակցություն են ստեղծել նույն անունով եւ հանրաքվեն ձեռնարկել նախագահ Քարիմովի լիազորությունները մինչեւ 2000 թ. երկարաձգելու շուրջը: «Ադոլաթ» ընդդիմադիր կուսակցության ղեկավարներ Բուրիեւի եւ Մեռայիդովի հայտարարության համաձայն, իրենք մտադրվել էին այլընտրական բեկնոնդության առաջադրել 1996 թ. կայանալիք Ուզբեկստանի նախագահի ընտրություններում:

digitised by A.R.A.R.@

Կրթություն

Հետևանքները չլինեն տխուր

Մտորումներ «Հայոց լեզվի գրավոր աշխատանքների հարցաթերթիկների» մասին

Ասել՝ նշենք, որ բոհեմի հայոց լեզվի մասնագիտական ավարտականներ վճռականորեն դեմ էին, որ 1995 թ. բնդունելության քննությունը հայոց լեզվից անցկացվի հարցաթերթիկներով: Ընդհանրապես կարելի է ասել այդ եղանակով քննության անցկացման ձեռին ամբիոնները դեմ էին և այժմ էլ գտնում են, որ այդ ձևը կարող է կիրառվել 1996 թվից, երբ լրջորեն քննարկված, ստուգված ու կատարելագործված «Հարցարանը» հրատարակված կլիներ: Ցավոք սրտի, մեր առաջարկությունը մերժվեց, և չնայած որ բնդունելության քննությունները արդեն մոտենում են, «Հարցարանը» դեռևս չկա: Բայց, համենայն դեպս, արդեն հրապարակի վրա են «Հայոց լեզվի գրավոր աշխատանքների հարցաթերթիկների» նմուշները, որոնք բնդհանուր գաղափար են տալիս «Հարցարանի» կառուցվածքի, հարցադրումների, նյութի բնդգրկման և հնարավոր ճաեր նրա որակի մասին:

Կազմողները գրում են, որ քննությունն արագի լրացնելով լուրջ բառի բաց թողնված r տառը: Բայց չէ՞ որ այս նախադասության մեջ կան ուղղագրական տեսակետից ոչ բե՛ էաս առնվազ նեղությունը այդ բառեր ես (մաղ, դաեր ի վեր, կաղայի միջից դաես դրված, գոգն և հանգրվան), որոնք մատուցվում են դիմորդին: Այս բերությամբ են տատանում «լրացնել բաց թողնված տառերը» բանալի՞ բառեր: Մենք խորհուրդ կտայինք հեղինակներին հիմնովին վերամշակել «Հարցարանի» ուղղագրական մասը:

Քիչ բե՛ էաս փոփոխության ենթարկվի նաև կետադրության բաժինը, քանի որ հարցերի մի մասում բաց է թողնված միայն մեկ, իսկ մյուս մասում մինչև 4 կետադրական նշան, մինչդեռ բոլոր հարցերն էլ գնահատվում են միանգամայն կես միավոր:

Մյուս կողմից հայտնի է, որ դպրոցում, մեր կարծիքով լրիվ իրավացիորեն, ուղղագրական և կետադրական սխալներն գնահատվում են տարբեր երկու կետադրական սխալը հավասարազոր մեկ ուղղագրական սխալի: Այս տարբերությունը վերացած է, և ուղղագրական ու կետադրական երևույթների գնահատումները նույնարժեք են կես միավոր: Դրանց են հավասարեցված նաև բառակազմական, բառագոյացության և շարահյուսական երևույթների գնահատումները: Մեր խորին համոզմամբ իրավիճակի տարբեր երևույթների գնահատումների համանարեցումը միայն բաց է թողնում լուրջ ենթադրության դիմաց չի կարող:

Անդրադառնալով նմուշների բառակազմության և բառակազմության բաժիններին պետք է նշել, որ մասնագետին ամենևին չեն կարող բավարարել դրանց ընդգրկման դրույթները և բուն իսկ հարցերի ու առաջադրանքների բնույթը: Մեր կարծիքով այս բաժիններում հեղինակների սկզբունքային սխալն այն է, որ երեսի բավարար չափով չխորանալով հարցի էության մեջ՝ հետևել են օտար լեզուների, հատկապես անգլերենի հարցարաններին: որոնք զլխավորապես կազմված են ոչ անգլիացիների, այլազգիների համար: Բայց, փաստ Ասծո, Հայաստանի բոհեմն ընդունվողների համար հայերենը մայրենի լեզու է: Հանգանալի է, որ այն չափանիշները, որոնք ընդունելի ու կիրառելի են օտար լեզուների գիտելիքների գնահատման համար, պիտանի չեն մայրենի լեզվի իմացության աստիճանի որոշման ու գնահատման համար, որովհետև առաջին դեպքում շեշտը դրվում է լեզուն հասկանալու ու բացատրելու կարողության վրա, երկրորդ դեպքում դրվում մայրենի լեզվից ստացած գիտելիքների, այլ կերպ ասած գրագիտության վրա: Այս սկզբունքային տարբերության անհասկանալի հետևանքը եղել է այն, որ «նմուշներում» տեղ գտած հարցերի մի զգալի մասին առանց վարանելու կարող է դասավանել դպրոցի երես չտեսած երեխան անգամ: Այսպես օրինակ բարձրագույն դպրոց ընդունվելու հավակնություն ունեցող դիմորդի առջև ամենայն լրջությամբ խնդիր է դրվում «սյունակներից ամենաճացնել և կոլ կոլի գրել կենդանու և նրա ձագի անվանումները»: Հեղինակները վերջում գտնում են դրանց օրինակների ու ճիշտ դասավորությունները հավ-ճոս, ոչխար-գառ, կով-հորթ, այծ-ոչ, և այլն: Կարծում ենք, որ մեկնաբանությունները ավելորդ են:

Նույն արժեքն ունեն նաև «փոխգրեցնում նշված բառերը ձևափոխելով հոմանիշասանելիանելով նախադասություններ» բաժնի համարները: Դրանք ոչ միայն ոչ մի նոր բան չեն տալիս, այլ ավելի ևս դժվարացնում են դիմորդի գործը: Ինչպես նաև «Գտնել հոմանիշ բառերը» բաժնի հարցերը: Այն (որ) շատ տարիներ են անցել: Զենք՝ ասաջ դասագիրքն ինձ դասվիրեց: Ցերունին (համբերությունն) սպասում էր որ դու վերադարձին: Երբ տան հասանք, (գերեկ) ժամը երեքն էր: Երբ հասանք (վրանները) և այլն: Այս տիպի հարցերի ճիշտ դասասխանները դպրոցական կրթության հետ ոչ մի կապ չունեն և աղյուսներ են հայերենի բնական ընդունության կազմավորման, որոնք ամեն մի հայախոս մարդու գիտակցության սեփականությունն են:

Անդրադառնալով հարցաթերթիկների բառակազմական բաժնին պետք է ասել, որ դրա հարցերը մեծ մասամբ ոչդունակ են և հանախ զվարճախաղերի տպավորություն են թողնում:

Հարցաթերթիկների նախադասության կառուցվածքին նվիրված բաժնում դիմորդներից պահանջվում է կատարել ընդունական փոխակերպումներ, այն է բարդ նախադասությունը դարձնել դերբայական դարձվածով ոչ նախադասություն, որիշի անուղղակի խոսքը ուղղակի, միստական նախադասությունը հասարակական, կրավորական նախադասությունը ներգործական և այլն: Հայտնի է, որ դրանք բուն ընդունական հարցեր են, և դրանց դեմ առարկություն չունենք: Այստեղ մեր դիտողությունն այն է, որ այս բաժնի օրինակները առանձին դեպքում սահմանվում են

ԱԶԳ

Միջազգային

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Նյուս Գինգրիչը ձգտում է վերադարձնել ԱՄՆ-ի հին օրերը

Նյուս Գինգրիչը: Ներմակահեր ու տգեղաս այդ ամուսնին մարդս զինակիցները միջակա ընտրություններում ոգեշնչվելով նրա եռանդից, փոխվրեժ լուծեցին այն 40 տարիների դիմաց, որոնց ընթացքում իրենք նվաստացուցիչ փոքրամասնություն էին կազմել Կոնգրեսի զույգ պալատներում: Քլինտոնն այժմ ստիպված է նախաձեռնություններն անցկացնել Կոնգրեսում ամուսնացված լոբիստների հարուցած խոչընդոտների միջով:

Հանրապետականները իրենց հաջողության համար պարտական են ոչ միայն վարկաբեկված ժողովրդավարներին, այլև Նյուս Գինգրիչի մեսիանական եռանդուն գործունեությանը, որը հանդես եկավ հանրապետական ազգային կոմիտեի նախագահի պաշտոնում: Միջին կարողության տեր ամերիկացին, որն ապրել ողնաբարն է, իդեալական է համարում այն իրավիճակը, երբ կառավարությունը չի միջամտում իր կյանքին, միաժամանակ, ամեն ինչ անելով այդ կյանքի բարելավման համար: Իմանալով, որ հայրենակիցները չեն սիրում այսպես կոչված «մեծ կառավարությունը» (նկատի է առնվում պաշտոնյաների կամայականությունը), Գինգրիչը գտավ գրավիչ կարգախոս. «Ես փոքր, բայց ուժեղ կառավարության կողմնակիցն եմ»:

Գինգրիչն ամերիկացիներին խոստանում է հինգ տարով կրճատել հարկերը: Այդ դեպքում տարեկան ավելի քան 200 հազար դոլար եկամուտ ունեցող ընտանիքները այսինքն հարստությունը սերունդը, ամենից շատ կշահի: Միաժամանակ ազգությունաբերական համալսարանի մի միլիոնավոր աշխատողներ կկարչում: Գինգրիչի զինակիցները խորհում են նաև այն մասին, որ կարելի է խնայողություն անել մբերա-



յին կտրոններ ստացող սակավ ունեցիչներ: Գինգրիչի զինակիցները խորհում են նաև այն մասին, որ կարելի է խնայողություն անել մբերա-ական կազմակերպություններում: Այս փաստն ստիպում է Գինգրիչին դիտել որպես աղազա նախագահական ընտրությունների լույծ բեկնածու:

Ակնհայտորեն դեմոկրատներին համակող մամուլ համախմբվել է ընդդեմ Գինգրիչի. մինչև հունվարի կեսերը ամերիկյան այն բերթում, որոնց հետևում է «Նեմաս» ծառայությունը, նրա դեմ ուղղված 90 հոդված էր հրատարակվել: Քաղաքական գործիչ դառնալուց առաջ Նյուս Գինգրիչը հայտնի էր որպես համալսարանական դասախոս: Իր դասախոսություն հարգներում նա անդադրման կարոտով հիշեցնում էր Ամերիկայի փառավոր անցյալը, աղազան դասակերելով որպես «ամերիկյան հարմակարգության նորագույն»: Ներկայումս Գինգրիչը ձգտում է Ներկայացուցիչների պալատի աշխատանքն ամեն ուրբաթ ավարտել մինչև ժամը 15 ը. որպեսզի ինքը հասնի Ջորջիայի նահանգում գտնվող իր ֆերմը, որի ուսանողներն իրեն սպասում են շաբաթ առավոտյան:

Մնալով են նրանք, որոնք Նյուս Գինգրիչին համարում են ինքնահավան հարազիչ: Նա կարողանում է լսել տրիբունների կարծիքը: Ու բենե երբեմն տարբեր ասիթներով հանդես կերոջով փորձում է մեղադրել դեմոկրատներին կամ օրինակներ է առաջարկում տիեզերական աղազա գաղութների վրա ԱՄՆ-ի իրավասության տարածելու մասին. Գինգրիչն անկասկած որոնվեսիոնալ հարգանքի գործիչ է, որը գիտե, թե իրենից ինչ է սպասում ամերիկացիների «լուռ մեծամասնությունը», որոնք հավատում են «փոքր, բայց ուժեղ կառավարությանը»:

«ԻԶՎԵՍՏԻԱ», 31 ՄԱՐՏ

ՀԱՄԱՌՈՏ

Մարսի բեկորները հասնում են Երկիր

Միլիոնավոր տարիներ առաջ Մարսի վրա տեղի ունեցած հուժկու պայթյունը աղարների բեկորներ է արձակել մոլորակի ուղեծիր, իսկ որոշ բեկորներ հասել են մինչև երկիր: Այս հետևությանն է հանգել Սան Դիեգոյում գտնվող Կալիֆորնիայի համալսարանի ֆիզիկոս Կուրտ Մուրին, հետազոտելով 18 կիլոգրամանոց այն ասուղը, որը 32 տարի առաջ ընկել էր Նիգերիայի տարածքում: Աստղագետները որոշել էին տիեզերական մարմնի անկման պահը, ինչը թույլ էր տվել բավական արագ հայտնաբերել այն: Գիտնականին այդ ասուղի մարսյան ծագման մասին հանգեցրեց աղակու «կաթիլներում» հայտնաբերված գազի ֆիզիկական բաղադրությունը: Այն լիովին համընկավ Մարսի մթնոլորտի տարրալուծման տվյալներին, որոնք 1976 թ. երկիր էր հասցրել ամերիկյան «Վիկինգ» միջմոլորակային տիեզերանավը:

Ամերիկացիներն ստեղծում են ոռասական «Էներգիայի» մրցակից

Մի շարք խոշոր ֆիրմաների հիմնած «Ամերիքոն սպեյս լայթեդ» նոր օդաչիեզերական ընկերությունը հայտարարեց, որ սկսել է աշխատել վերօգտագործելի բեռավոր տիեզերական հրթիռի նախագծի վրա, որը կկարողանա բեռով ու ղեծիր դուրս գալ եւ վայրէջք կատարել օդանավակայանում: X 34 հրթիռի հեղինակները գտնում են, որ արդեն 1998 թ. կկարողանան ուղեծիր դուրս բերել առաջին արբանյակը: Մղիչ հրթիռի վրա աշխատանքներն սկսվել են տիեզերական շուկայում մրցակցության սուր պատճառով: Նոր հրթիռը թույլ կտա ծառայությունների արժեքը նվազեցնել այսօր առկա համակարգերի օգտագործման գնի երկու երրորդի չափով: X 34 արբանյակն ուղեծիր դուրս գալուց հետո երկրի մակերեսույթի վրա ինքնաշխատ ռեժիմով կատարելու անջատված շարժիչներով: Մղիչ հրթիռի վերգետնյա սպասարկման համար կպահանջվի 15 մարդուց բաղկացած անձնակազմ:

Ըստ «Իզվեստիա», 4 պարիզ

Ճապոնացիները շարունակում են ստեղծագործել

Հաջողությամբ է ավարտվել արեւի մարկոցներով աշխատող փորձնական էլեկտրամոբիլի 3200 կիլոմետրանոց փորձարկման վազքը, որն ստեղծվել է Տոկիոյի էլեկտրատեխնիկական համալսարանի լաբորատորիաներում: Այս մասին ապրիլի 5 ին ԻՏԱՌ ՏԱՍՍ ի թղթակցին հայտնել է էլեկտրամոբիլի ստեղծող, պրոֆեսոր Մասահարու Ֆուձիհարան: 16 օրյա ամբողջ ճանապարհի երկարությամբ Տոկիոյից մինչև Հեր երկրի հարավում գտնվող Կագոսիմա քաղաք, ոչ մի լարք կոտրվածք չի գրանցվել: Ավտովազքի արագությունը ժամում կազմել է 80 կիլոմետր, տեղ տեղ մեքենան զարգացրել է ժամում մինչեւ 100 կիլոմետր առավելագույն արագություն: 15 կիլոմետր վազքի համար ծախսվել է ընդամենը մեկ կիլովատ էլեկտրաէներգիա:

ԱՐԱՔԵՄԻՏ

ԹՈՒՐՔԻԱ

Իսրայելի մասնագետները Իրանում օգնում են թուրքերին

Կնքվել են թուրք-արգենտինական պայմանագրեր

Իրանի հյուսիսում հրդական աշխատավորական կուսակցության դեմ ձեռնարկված գործողության ընթացքում թուրքական զորքերին «խորհրդատվական օգնություն» են ցույց տալիս շուրջ 50 իսրայելցի զինվորական մասնագետներ: Այս մասին ապրիլի 6 ին Կահիրեից հաղորդում է ԻՏԱՌ ՏԱՍՍ-ի թղթակիցը, վկայակոչելով իրազեկ դիվանագիտական աղբյուրներ:

Անկարայի կողմից պաշտպանվող այս նախաձեռնությունը նախատեսում է տարածաշրջանում խիստ ակտիվ կոցների եւ հրդական կազմավորումների առաջխաղացումների վերաբերյալ ռադիոային վաղ ազդարարման համակարգերի տեղադրում:

Գոտին կստեղծվի Հարավային Լիբանանում իսրայելական «անվտանգության գոտուն» հար եւ նման եւ 20 կիլոմետրով կխորանա Իրանի տարածքում:

Մյուս կողմից, արգենտինա-թուրքական հարաբերությունների ամրապնդմանն ուղղված մի շարք համաձայնագրեր են ստորագրել Արգենտինայի եւ Թուրքիայի նախագահներ Կարլոս Մենեմը եւ Սուլեյման Դեմիրելը Թուրքիայի պաշտպանության Բուենոս Այրես պաշտոնական այցի ժամանակ: Ինչպես հաղորդում է ապրիլի 5 ի ԻՏԱՌ ՏԱՍՍ ը, նախագահական «Կասա Ռոսադա» պալատում երկու պետությունների դեսպանները իրենց ստորագրություններն դրեցին զանազան տեխնիկական համաձայնագրերի եւ [illegible] պայմանագրի եւ [illegible] կազմակերպված [illegible] դեմ պայքարի համագործակցության համաձայնագրի տարբերակներ: [illegible] փաստաթուղթը նախատեսում [illegible] հարաբերությունների դեմ պայքարի [illegible] գործողություններ եւ ազգային անվտանգության ապահովման հարցերում փորձի փոխանակում:

ԱՐԱՔԵՄԻՏ

ՀԱՄԱՌՈՏ

Ավստրիային առայժմ ՆԱՏՕ-ն պետք չէ

«Այժմ Ավստրիան անհրաժեշտություն չի տեսնում մտնելու ՆԱՏՕ ի կազմի մեջ», հայտարարել է Ավստրիայի կանցլեր Ֆրանց Վրանիցկին ապրիլի 5 ին Փարիզի «Ֆիգարո» թերթում հրապարակված հարցազրույցում: Սակայն նրա ասելով, ՆԱՏՕ կազմակերպությունը, նրա փիլիսոփայությունն ու նպատակները տարիների ընթացքում կարող են փոփոխվել: «Ոչ ոք չգիտե, թե ինչի կնմանվի ՆԱՏՕ ն 10 կամ 20 տարի հետո: Ուստի ես չեմ ցանկանում այս հարցին վերջնական նպատակ «ոչ» պատասխանել», այս առնչությամբ նշել է Ավստրիայի կանցլերը:

ԱՐԱՔԵՄԻՏ

Ապրիլն ամենուր է թանկացման ամիս, Ռումինիայում նույնպես

Բենզինի գինը ապրիլի 5 ից Ռումինիայում բարձրացել է 33 [illegible]: Նախկին 450 լեյի փոխարեն (պաշտոնական փոխարժեքով 0,24 ամերիկյան դոլար) ավտոմեքենաների տերերը ստիպված են մեկ լիտր վառելանյութի համար վճարել 600 լեյ (0,32 ամերիկյան դոլար): Ինչպես հաղորդում է ԻՏԱՌ ՏԱՍՍ ը, էապես բարձրացել է նաեւ դիզելային վառելիքի եւ կենցաղային գազի արժեքը: Ինչպես նշվում է ֆինանսների նախարարության հաղորդագրության մեջ, այս ժողովրդականություն չվայելող միջոցառման պատճառը համաշխարհային շուկայում նավթի գների բարձրացումն է, ինչպես նաեւ դրամական միջոցների բարձրացումն է մինչև 1 լեյի փոխարժեքի փոփոխությունը:

ԱՐԱՔԵՄԻՏ

ՖՐԱՆՍԻԱ

Լիոնել Ժոսպենի չափավորական ծրագիրը

Մինչ Ֆրանսիայի նախագահության երկու գլխավոր հավակնորդներ վարչապետ Էդուար Բալադյուրը եւ Փարիզի քաղաքապետ, նեոգոլիստ Ժակ Շիրակը միմյանց դեմ անցկացնում պայքար են մղելու, հայտնվել է երրորդ հավակնորդ ձախերի բեկնածու Լիոնել Ժոսպենը, որը մեկ նաբաններն կարծիքով, բնորոշում նա մասնավորապես առաջարկում է կրճատել կառավարության կազմը, պաշտպանվորներին հետաքրքրության տալ անցկացնելու նախարարների ֆինանսական գործունեության ստուգումներ. 1997 թվականից աբխազական շաբաթվա տեսությունն իջեցնել 37 ժամի: Նա խոստանում է կրճատել պետական բյուջեի պակասուրդը, միջազգային ֆինանսական գործառնությունների վրա տարբ սահմանել, երկու տարում անօգնականներին աղաղակել կացարանով, եռանդագին պայքարել սոցիալ դեմ. նա խոստացել է 7 ամսվա ժամկետը դարձնել 5 ամսվա: Ի տարբերություն վարչապետ Բալադյուրի, Լիոնել Ժոսպենը հարուստ չէ, բաժնետոմսեր եւ ամառանոցային տներ չունի: Ժոսպենի ամբողջ ունեցվածքը կազմում են իր վարձած բնակարանի կահույքը եւ «Ռենո 19» ավտոմեքենան: Ժոսպենը խոստանում է բարելավել երիտասարդների կանանց, ներգաղթյալների, ազգային փոքրամասնությունների վիճակը, ավելացնել հարուստներից գանձվող տուրքը: Բայց ընդհանուր առմամբ ներկայացնելով գործողությունների սոցիալ-դեմոկրատական ծրագիր, Լիոնել Ժոսպենը փաստորեն չի խոստանում վտանգ ֆրանսիացիների կյանքը, բանգի նրան հայտնի է, որ դա իր ուժերից վեր է եւ իրականում հենց կյանքն է 1981 թվականից ի վեր: Հրատարակ Միտերանը նոյեմբերյան «ընտրվեց» փոխել սոցիալիստական կուսակցությունը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Նրա խանդակներն իրենց տեղն են որոնում

Այսօր լրանում է Արա Սարգսյանի ծննդյան 93-ամյակը

Բյուզանդիոն-Կոստանդնուպոլիս-Ստամբուլ: Դեռևս բյուզանդական կայսրության օրոք ամենասարբեր զբաղմունքի տեր հայերն այստեղ շատ էին: Ծագումով հայ ճանաչվելը համազոր էր մեծարանքի: Սակայն օսմանյան նվաճումից հետո հայերի վիճակը վատացավ. ամենադրդեզականն ու օրհասականը 1915-ին էր: Հազվադեպ ընտանիքներ փրկվեցին ֆիզիկական բնաջնջումից, դրանց մեջ էր Պոլսո առաջնորդական ընկերությունների մեկի գրագիր Միհրան Սարգսյանի՝ ապագա քանդակագործի հոր ընտանիքը: Նրա որդին՝ Արան, 1915-ին ընդամենը 13 տարեկան էր, բայց դառնությունների մեջ նա ժամանակից շատ հասունացավ:

կատարած դիմանկարները (մոտ երկու տասնյակ) արժանացան մամուլի դրվատանքին, դրանցից շատերը այսօր էլ ներկայացված են տեղի բանգարաններում:

Արա Սարգսյանը մեկն էր Երևանում գտնվող այն հայ մտավորականներից, ում առաջարկեց գալ Հայաստան: 1925 թ. ափարելով ուսումը, նա գալիս է Հայաստան:

Արա Սարգսյանի անցած ուղին մեր քանդակագործության անցած ուղին է:

Դեռևս դպրոցի, Պոլսում Արա Սարգսյանը տով ու հուսահատություն քանդակեց («Քաղց», «Երաժշտություն», «Տառապանք», «Հուսահատություն»): Իր ծննդավայրում միայն այդ էր տեսել եւ դեռ չգիտեր, որ կյանքում իր բաժինն են լինելու վերածնության կոթողը «Մայր Հայաստանը» եւ հայ մեծ լուսավորիչներ Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի խմբաքանդակը: Վեհ ու ճակատային կանգնած են Սահակ Պարթեւը եւ Մեսրոպ Մաշտոցը: 1950-ական թթ. Արա Սարգսյանին առաջարկեցին հեռացնել հոգեւորական Սահակ Պարթեւի կերպարը, բայց քանդակագործը հրաժարվեց՝ բայց գիտակցելով կաթողիկոսի դատական առաքելությունը:

Հայոց եկեղեցին այս երկու մեծերին դասել է արքեպի կարգը: Դիմում եմք Սուրբ Էջմիածնին, մոտ 1700-ամյակը եւ այս կաղակցությամբ ցանկալի է, որ մեր քանդակագործության գլուխգործոցներից մեկը Արա Սարգսյանի հիշյալ ստեղծագործությունը տեղադրվի ի տես հայ ժողովրդի, արժանի եւ դատաշաճ տեղում:

Իր տեղադրմանն է սպասում նաեւ «Այգեկոր» կոմպոզիցիան: Սա բարձրախնդակի եւ բոլորահանդակի մի համադրություն է, որ չունի իր նախադեղը մեր արվեստում: Այս կոմպոզիցիան հավասար հաջողությամբ դիտվում է երկու կողմից, եւ նախատեսված էր տեղադրել որեւէ այգում, պուրակում, ճանապարհին, երկկողմանի դիտման համար:

Արա Սարգսյանը բազմաժանր ստեղծագործող է: Նա կերտել է կոթողներ, ճարտարապետական համալիրների լայնածավալ հարթանդակներ, սյուժետային հորինվածքներ, դիմանկարներ: Միաժամանակ նա զբաղվել է բատերական նկարչությամբ եւ գրական, արվեստաբանական գործունեությամբ: Սարգսյանը ավելի քան չորս տասնամյակ եղավ մեր քանդակագործության առաջատար ուժը, իր թեմատիկ եւ դիմանկարային աշխատանքներով հարստացրեց հայկական կերպարվեստը: Նրա անվան հետ է կապվում Հայաստանում պրոֆեսիոնալ քանդակագործության սկզբնավորումը:

Արա Սարգսյանը վարում էր նաեւ լայնատարած եւ արդյունավետ հասարակական գործունեություն: Հայաստանի կերպարվեստագետների միության ստեղծման օրից նա անընդմեջ ընտրվում է վարչության անդամ, նախագահ կամ դատախանատու քարտուղար:

Հետպատերազմյան Երեւանում 1945-ին, Արա Սարգսյանի ջանքերով հիմնվեց Գեղարվեստական ինստիտուտը: Սկզբնական շրջանում ինստիտուտը չուներ իր շենքը եւ ընդունելությունները անցկացվում էին կերպարվեստագետների միության դասասենյակում, դեպքական դատկերասրահում եւ այլուր: Հետո «գոհով» ժամանակավորապես զբաղվում է Գեղարվեստական ուսումնարանի շենքի մի մասը, եւ, ի զարմանս շատերի, դեռեւս իր սեփական շենքը չունեցող ինստիտուտը ուսումնական տարին սկսում է ժամանակին: Անհրաժեշտ նվիրվածության, անսպառ եռանդի ու բացառիկ կազմակերպական ժամանակակիցներ ինստիտուտը դարձավ այն, ինչի կոչված էր: Ինստիտուտի հիմնադրման օրից մինչեւ 1960 թ. Արա Սարգսյանը նրա տնօրենն էր: Իսկ հետո, մինչեւ կյանքի վերջը (վախճանվեց 1969 թ.) եղել է քանդակագործության ամբիոնի վարիչը, քանդակագործական արվեստանոցներից մեկի դեկավարը:

1947 թ. Սարգսյանին շնորհվեց պրոֆեսորի կոչում: Այս տարի լրանում է գեղարվեստական ինստիտուտի հիմնադրման 50-ամյակը: Արդարացի կլիներ, թեեւ ուշացումով, այն կոչել դասական, հասարակական գործիչ, դեպքական մրցանակների դափնեկիր, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, գեղարվեստական ինստիտուտի հիմնադիր Արա Սարգսյանի անվամբ:

ՆԵԼԼԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Արա Սարգսյանի,
Հակոբ Կոջոյանի
տուն-թանգարանի ավագ
գիտաշխատող

ԵՐԵՎԱՆ

«Թատրոնը սիրուհիս է»

ասում է Պերճ Ֆազլյանը, ում ստեղծագործական 50-ամյակն են տոնում այս օրերին

Երեկ առավոտյան ԳԽ գիտության եւ կրթության, լեզվի եւ մշակույթի մշտական հանձնաժողովը հանդիպում էր նախաձեռնել սփյուռահայ նշանավոր բեմադրիչ, բատրոնի եւ կինոյի դերասան, մանկավարժ, նկարիչ, կանադայի «Արմենս ռամա» հայկական հեռուստաժամի տնօրեն Պերճ Ֆազլյանի հետ: Հանդիպմանը մասնակցում էին հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռաֆայել Արգարյանը, մշակույթի նախարարությունից Նորա Դայանը, Հայաստանի ԹՄՄ-ի խորհրդի նախագահ Ֆրունզե Դովլաթյանը, վարչության նախագահ Սուքիաս Թորոսյանը, ներկայացուցիչ Եղիա Գայանյանը, լրատվության բաժնի պատասխանատու Մարիետա Մակարյանը եւ Հորդանանում ԹՄՄ ներկայացուցիչ Գեղամ Թորոսյանը: Հանդիպման զույգի նյութը ընտրում էր այստեղ եւ սփյուռքում հայ մշակույթի արդի վիճակը, գործնական առաջարկություններ էին արվում հայրենի եւ արտերկրի մշակույթի գործիչների գործունեության դաշտը ընդլայնելու ուղղությամբ: Այնուհետ օրվա երկրորդ կեսին Պերճ Ֆազլյանը հրավիրվեց գրականության եւ արվեստի թանգարան, ուր նշվեց նրա ստեղծագործական գործունեության 50-րդ տարեդարձը: Ինչպես բացման խոսքում նշեց թանգարանի տնօրեն Հենրիկ Բախչինյանը, Ֆազլյան արվեստագետը ոչ միայն Պոլսի, Լիբանանի եւ Կանադայի հայ գաղթօջախների ամենից հայտնի անունն է, այլեւ մշակութային խոշոր գործիչ ընդհանրապես, ով կարողացել է արեւմտահայ եւ սփյուռքի բատրոնների ավանդույթները ոչ միայն շարունակել, այլեւ զարգացնելով հասցնել միջազգային մի նոր հնչողության: Այնուհետ բոլոր ելույթ ունեցողները՝ արվեստաբան Բախտիար Հովակիմյանը, հեռուստաբեմադրիչ Հրայր Աշուղյանը, երիտասարդ բատերագետ Արծվի Բախչինյանը եւ մնացածները շեշտեցին Պերճ Ֆազլյանի մեծամեծ ծառայությունները այն երկրներին, որտեղ ստեղծագործելուն զուգընթաց արվեստագետը նոպաստել է այդ երկրների բատերական կյանքի առաջընթացին, հիմնել նաեւ տեղի ազգային բատրոնները: Ֆազլյանը Լիբանանի առաջին դրոֆեսիոնալ բատրոնի հիմնադիրն է: Ամենաարբեր գաղութներում նրա ստեղծած բատերախմբերը՝ «Երիտասարդաց բատերախումբ», «Նոր բեմ», «Վահրամ Փափազյան», «Հայ բեմ», այլի են ընկել հեռարձիր եւ համարձակ բեմադրություններով: Ֆազլյանը նաեւ գրչի մարդ է, հեղինակել է բատրոնի վերաբերյալ արժեքավոր հոդվածներ եւ աշխատություններ, որոնք տպագրվել են «Մարմարա», «Զարթօնք» թերթերում եւ «Բուլիս» ամսագրում: Ֆազլյանը նաեւ բատերական հետաքրքիր զգեստների նկարիչ է, մասնավորապես դեսք է հիշել նրա «Հին ասվածները», որը զգեստների սիմվոլիկ ձեւավորմամբ համարձակ փորձ է դիտվել: Բոլորիս հիշողության մեջ արքուն են նրա հեռուստատեսային բեմադրությունները՝ Երուխանի «Չկնորսին սերը» եւ Ռոմեր Հաստեծյանի «Մարդը եւ իր կեղեւը»: Հետաքրքիր էր դերասանուհի Թամար Հովհաննիսյանի հիշողություններով լեցուն խոսքը. «Որպես դերասանուհի երջանիկ եմ, որ խաղացել եմ նրա ընկերակցությամբ, որպես հանդիսատես կրկնակի երջանիկ եմ, որովհետեւ ներկա եմ եղել մի հրավառության, ուր Մհեր Մկրտչյանը Պաղտասար ախպար էր խաղում, իսկ Պերճ Ֆազլյանը՝ Օգսեն»:



Վերջում Պերճ Ֆազլյանը շնորհակալական խոսքից բացի, ցանկություն հայտնեց դահլիճում ներկա բատերական ինստիտուտի ուսանողների հարցերին, որտեղ հետաքրքիր դիտողություններ եւ բնութագրումներ տվեց իր արվեստին, իր խաղացած եւ երազած դերերին, դերասանին ու նրա՝ դերի վրա աշխատանքին եւ այլն: «Միշտ ցանկացել եմ բան մը ընել, սիրել մի բան եւ նվիրվել մի բանի»: Իսկ բատրոնի մասին ուղղակի հակիրճ դատասխան տվեց՝ բատրոնը սիրուհիս է:

ԱՌ. Հ.

ԳՏԱԾՈ

Ավստրիայում գտնված անհայտ խաչքարը սպասում է

Ավստրիայի լեռնային շրջանի հյուսիսային մասում են գտնվում Քիլիներ, Անի, Ղուսբրուման Մեծ եւ Փոքր Ցվիներ նախկին բուրգական, այժմ վրացական գյուղերը: Ղուսբրումանին շատ մոտ հյուսիսային մի բլրակի վրա անտառից ներեւ, գտնվում է Մայր եկեղեցի կոչվող արքավայրը, որը Վարդավառի տոնին հնուց ի վեր ամեն տարի լեփ-լեցուն է լինում հայ ուխտավորներով: Թե ինչու է ուխտատեղին Մայր եկեղեցի կոչվել, հայտնի չէ: Դարեր ի վեր խոսք չի եղել, թե որ ազգի ու դավանանքի կառույց է այն: Մուտքը արեւմուտքից է, ունի մոտ 3 մ լայնություն, 4 մ երկարություն: Բացօթյա է: Մուտքի դիմացի դատին, քարե վոտրիկ լուսամուտի տակ ուղղակի գետնի մեջ է գտնվում է մի մեծ քար: Այս տարվա փետրվարին դատերի ներսում հողի հաստ շերտը հաղթահարելով, վոտրեցինք խցի հատակը եւ մի խաչքար գտանք, վրան հայերեն տառեր: Տառերը դարզ կարդացվում են, բայց բառ կազմելն անհնար է, առանց ծածկագրերի նշանակությունը հասկանալու: Միայն կարդացանք դարզել ՋԻԼ՝ 927 թիվ:

Խնդրում ենք հուշարձանների դահպանության վարչությանը օգնել հայտնաբերելու այս կարեւոր հուշարձանի դատմությունը:

ԱՐԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Միխալկովի ֆիլմը ցնցեց ԱՄՆ-ը

ՄՈՍԿՎԱ, 6 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐԲ ԻՍԱՊՐԵՍ: Ապրիլի 5-ին Կինոյի տանը տեղի ունեցավ օրերս «Օսկար» մրցանակի արժանացած Նիկիտա Միխալկովի մամլո ասուլիսը: Ինչպես բացատրեց կինոբեմադրիչը, իր «Արեւից հոգնածները» ֆիլմը ամերիկյան կինոակադեմիայի անդամներին ցնցել է բառացիորեն ամենակզբից եւ դարզվել է, որ կինոնշանատները, որոնք սովոր էին մրցութային ֆիլմերը դիտել տեսաժապավենների, սփոփված են եղել «տաբատները հագնել եւ կինոսրահ մեկնել» ռուսական ֆիլմի տեսաժապավենային տարբերակի բացակայության պատճառով: Նիկիտա Միխալկովի խոսքերով, ներկայումս բաղձալի արձանիկը՝ «Օսկարը» արժանի տեղ է գրաղեցրել իր աշխատասենյակում: Հրեքշաբթի օրը «Երեք Տ» ստուդիա է հրավիրվել հոգեւորական, որը օրհնել է, իր իսկ խոսքերով, այդ «առարկան»:

Կարել Գոսը փառքի հասավ... իբրեւ նկարիչ

«Չեխիայի սոխակ» հռչակված քաղցրաձայն Կարել Գոսը կյանքի 57-րդ տարում փառքի հասավ իբրեւ... գեղանկարիչ: Վերջերս կեսգիշերին 2 գողեր մուտք գործեցին երգչի՝ Պրահայում գտնվող առանձնատուն: Անսովոր աղմուկից արթնացած Կարել Գոսը ամենեւին չշփոթվեց իր տանը անկոչ հյուրերին տեսնելով: Նույնիսկ նրանց փախուստի նախաձեռնողը եղավ՝ ատրճանակից նախազգուշական կրակոց արձակելով: Գողերը փախուստի դիմեցին, բայց նույն օրն իսկ ձերբակալվեցին ոստիկանության կողմից: Ինչպես հետագայում դարզվեց, գողերը դատկերացում անգամ չեն ունեցել, թե ում են թալանել: Իսկ երգչի համար «հաճելի անակնկալն» այն էր, որ կողոպտիչները հոլանդացի նշանավոր վարդեսների հավաքածուն բողոքարկել էին Կարել Գոսի վրձնած կտավներից մեկը:

Սինատրան նորաձեւարար

80 ամյա Ֆրենկ Սինատրան բժիշկների կողմից մի քանի ամիս երգելը դադարեցնելու շնորհիվ իր հարկադրված արձակուրդն օգտագործեց փողկաղների նոր նմուշներ ստեղծելու վրա: Վերջերս Սինատրայի հավաքածուն ցուցադրվեց մեծ երգչի արտիստական կարիերայի անբաժան մաս հանդիսացող Լաս Վեգասում: Հավաքածուի շնորհանդեսի ժամանակ Սինատրան, խոսելով իր նախընտրած գույների մասին, խոստովանել է, որ նարինջ շատ է սիրում եւ միշտ բուլուլուլ է ունեցել նարնջագույնի, երկնի կապույտի եւ խոտի կանաչի հանդեպ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԵրԱԿ-ը Հախվերդյանի համերգը ՀՅԴ-ին չէր նվիրել

«Ազգ» օրաթերթի երեկվա համարում Ռոբին Հախվերդյանի համալսարանում տված համերգի հրատարակման մեջ ասվում էր, թե համերգը նվիրված էր ՀՅԴ-ին: ԵրԱԿ-ը սխալված է հայտարարել, որ ինքը արդարադատական մարմին է, եւ համերգը նվիրված էր իր ստեղծման տարեդարձին: ԵրԱԿ-ը հայտարարում է նաեւ, որ համերգում քաղաքական նյութով հանդես եկած երիտասարդը կապ չունի մեր կազմակերպության հետ: Ելույթը տեղի է ունեցել բացառապես Հախվերդյանի նախաձեռնությամբ, ինչին ԵրԱԿ-ը նախապես տեղյակ չի դահվել:

ԵրԱԿ-ը մի անգամ եւս հայտնում է, որ ինքը կազմակերպել էր հանդիպում Երգահան, մտավորական Ռոբին Հախվերդյանի հետ, որի արվեստը շատ բարձր է գնահատում եւ գտնում է, որ ոմանց կողմից փորձվում է այդ հանդիպումը օգտագործել իրենց կուսակցական, անձնական շահերի հետապնդման համար:

Երիտասարդական ակադեմիա
հասարակական
կազմակերպություն («ԵրԱԿ»)

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

«Պարի Սեն-Ժերմենի» առաջին պարտությունը

Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչ առաջին հանդիպումները հսկայական հետաքրքրություն առաջացրեցին: Հավանաբար հեռուստադիտողներից շատերը հետևեցին դրանց ընթացքին: Հատկապես ուշադրության կենտրոնում էր համաշխարհային դասակարգմամբ երկու ուժեղագույն թիմերի «Պարի Սեն-Ժերմենի» և «Միլանի» միջև հանդիպումը: Դա հավատարների մրցավեճ էր: Ամբողջ խաղի ընթացքում անգիջում դայքար էր ընթանում: Երկու կողմերն էլ ձգտում էին հաղթանակի, սակայն ոչ մի կերպ չէին կարողանում արդյունքի հասնել, չնայած ստեղծված բազմաթիվ գոլային դրությունների: Թվում էր, խաղը կավարտվի ոչ-ոքի, սակայն իտալացիները 91-րդ րոպեին գրավեցին դաշտ տերերի դարպասը և 1-0 հաշվով կարևոր հաղթանակ տարան: Աչքի ընկավ «Միլանի» խորվաթացի խաղացող Բոբանը:

Պակաս լարված չէր Մյունխենում տեղի ունեցած «Բավարիա»-«Այաքս» կիսաեզրափակիչ մյուս հանդիպումը: Հոլանդացի ֆուտբոլիստները մարսականորեն էին տրամադրված: Նրանք ամեն գնով ձգտում էին հաղթանակի և շատ մոտ էին դրան: «Բավարիան» հանդես էր գալիս առանց իր առաջատար խաղացողների թիմի ավագ Լոթար Մատեուսի, ինչպես նաև հարձակվողներ Ժան Պիեռ Պապենի և բուլղարացի Էմիլ Կոստադինովի, որոնք վնասվածքներ ունեին: Չնայած «Բավարիան» հանդես էր գալիս սեփական հարկի տակ, սակայն ավելի շատ մտահոգված էր ոչաշտանությամբ: Այնուամենայնիվ «Այաքսին» չհաջողվեց իրացնել խաղային առավելությունը և հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի 0-0: Պատասխան հանդիպումները տեղի կունենան ապրիլի 19-ին:

ՍՐՃՈՒԹ

Քրիստինե Չզմեչյանը 1995-ի մարզուհի-գեղեցկուհի

ՀՀ սպորտվարչության և «Մարզական Հայաստան» թերթի կազմակերպած 1995 թ. մարզուհի գեղեցկուհի մրցույթի եզրափակիչին մասնակցելու իրավունք էին ստացել 30 մարզուհի: ՀՀ սպորտվարչության փոխնախագահ Արթուր Գրիգորյանը շնորհավորեց բոլոր մասնակիցներին Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ:

1995 թ. մարզուհի գեղեցկուհի ճանաչվեց գեղալողորդուհի Քրիստինե Չզմեչյանը: Նա պարգևատրվեց տեսախցիկով, որը տրամադրել էր «Մարզական Հայաստան» թերթը: Եզրափակիչի 6 մասնակիցներն ստացան հրավիրատոմսեր՝ մասնակցելու այսօր երի տասարդական պալատում անցկացվելիք մայրության և գեղեցկության օրվան նվիրված տոնահանդեսին: Նրանց համար հուշանվերներ էր պատրաստել «Շուշան» հրատարակչությունը:

Քրիստինեն սպորտի վարպետ է, պարարտում է մանկապատանեկան բարձրագույն վարպետության դպրոցում, հասակը 168 սմ է, քաշը 54 կգ, սիրում է ընթերցանություն և կենդանիներ: ՆՏ

Ներկայացնում ենք մասնակից թիմերին «Զանգեզուր» (Գորիս)

Թիմը հիմնադրվել է 1982 թ.:
Մարզագետը՝ մոխրագույն-սպիտակ-մոխրագույն:
Խաղերն անցկացնում է Գորիսի քաղաքային մարզադաշտում (2000):
Լավագույն ցուցանիշը բարձրագույն խմբում՝ 11-րդ տեղ (1994 թ.):
ՀՀ առաջնություններում. 1993 թ. (Առաջին խումբ)՝ 22 +16=2-4 46-19
1994 թ. (Բարձր. խումբ)՝ 28 +9=4-15 25-77
Ամենախոշոր հաղթանակը՝ «Զանգեզուր»-«Կանազ»՝ 4-0 (1994 թ.):
Ամենախոշոր պարտությունը՝ «Արարատ»-«Զանգեզուր»՝ 14-0 (1994 թ.):
Բարձրագույն խմբում բոլորից շատ խաղեր անցկացրել են Ջ. Էլյազյանը և Ար. Աբրահամյանը՝ 26-ական:
Թիմի լավագույն ռմբարկուն՝ Ա. Մանուկյան՝ 12 գնդակ:

Անուն, ազգանուն	Ծննդյան թիվ	Հասակ/քաշ	Ակումբ(ներ)ը	Խաղ (գոլ)
Արմեն Սիրգոյան	1.07.67	1,68/65	«Զանգեզուր»	22(-45)
Վիտալի Պետրոսյան	7.01.76	1,79/77	-	-
Արթուր Ստեփանյան	2.03.56	1,70/65	«Զանգեզուր»	23
Արմեն Դ. Ղազարյան	27.05.65	1,76/72	«Զանգեզուր»	22(1)
Արմեն Ս. Ղազարյան	3.01.72	1,73/72	«Սյունիք», «Զանգեզուր»	45
Սամվել Մկրտչյան	4.04.66	1,77/72	«Զանգեզուր»	13
Արթուր Գրիգորյան	13.06.74	1,66/60	«Զանգեզուր»	6
Հայկ Դավթյան	13.07.77	1,77/70	«Զանգեզուր»	1
Արամայիս Աբրահամյան	14.12.61	1,68/70	«Զանգեզուր»	26(1)
Ջիվան Էլյազյան	2.12.61	1,72/70	«Զանգեզուր»	26(1)
Արթուր Ասլանյան	3.05.65	1,74/71	«Զանգեզուր»	25(1)
Արարատ Ավանեսյան	16.01.67	1,75/75	«Զանգեզուր»	24(1)
Արսակ Հովհաննիսյան	1.01.72	1,76/70	«Զանգեզուր»	21
Արթուր Հարությունյան	5.11.74	1,65/60	-	-
Արթուր Մանուկյան	25.10.71	1,70/65	«Սյունիք», «Զանգեզուր»	53(21)
Վիտալի Մինասյան	22.07.75	1,77/76	«Զանգեզուր»	6
Արսեն Եղիազարյան	6.08.75	1,74/72	«Նախիջևան»	41(3)
Խաչիկ Հովսեփյան	18.06.76	1,70/69	-	-

Ակումբի նախագահ՝ Սեյրան Ակլունց:
Գլխավոր մարզիչ՝ Սեյրան Պետրոսյան:
Մարզիչներ՝ Վրեժ Դավթյան, Անուշավան Ղազարյան:
Ծանոթություն. Տվյալները ըստ նախորդ երեք առաջնությունների:
Պատրաստեց ԳԱԳԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ԽԾԱՆԿԱՐ

Սամվիրասը կրկին առաջին տեղում

Թենիսի միջազգային ֆեդերացիան հրապարակեց աշխարհի ուժեղագույն թենիսիստների դասակարգման ցուցակը: Կրկին տղամարդկանց մեջ ուժեղագույնն ամերիկացի Փիթ Սամփրասն է: Շարունակում է 2-րդ տեղը զբաղեցնել վերջինիս հայրենակից Անդրե Ագասին: 3-րդ տեղում է գերմանացի Բորիս Բեկերը: Ամերիկացի մեկ այլ թենիսիստ՝ Մայքլ Չանգը գրավում է 4-րդ տեղը: Ուժեղագույն հնգյակը եզրափակում է իսպանացի Սերխի Բրուգերան: Կանանց ուժեղագույնների ցուցակը գլխավորում է իսպանուհի Արանչա Սանչեսը: Շտեֆի Գրաֆը (Գերմանիա), որը երկար ժամանակ առաջինն էր, նա հանջել է 2-րդ տեղ:

45-ամյա Հոլմսը որոշել է ռինգ վերադառնալ

Պրոֆեսիոնալ բոքսֆամարտի ծանր քաշի աշխարհի նախկին չեմպիոն Լերի Հոլմսը 14 տարվա ընդմիջումից հետո որոշել է ռինգ վերադառնալ: Նրան ոգեւորել է իր սերնդակից Հոլիֆիլդի հաջողությունը, որը նույնպես, տեւական ընդմիջումից հետո վերադառնալով ռինգ, նվաճել է աշխարհի չեմպիոնի կոչումը: «Եթե Հոլիֆիլդը մեծ ընդմիջումից հետո ասպարեզ վերադառնալով կարողացել է հաջողության հասնել, ապա ի՞նչն է խանգարում ինձ, որ ես էլ ձգտեմ դրան», հայտարարեց Հոլմսը, որն իր առաջին մարտը շահելու դեպքում ամռանը կմրցի բանից վերջերս ազատված աշխարհի նախկին չեմպիոն Մայք Թայսոնի հետ:

Ստեղծվել է կարատեի նոր ոճի ֆեդերացիա

Կարատեի ձյոսիկնոն սյորիձյուի ֆեդերացիայի նախագահ Վարդան Գեւորգյանը «Նոյյան տապան» լրատվական գործակալության թղթակցին հաղորդել է, որ Հայաստանում բացվել է Սիտորյու կարատե դոի ֆեդերացիա: Վերոհիշյալ ոճը Վ. Գեւորգյանը սովորել է Կուբայի Հանրապետությունում, ուր փետրվար մարտ ամիսներին տեղի ազգային հավաքակի հետ անցկացնում էր համատեղ ուսումնամարզական հավաք: Արեւելյան այս ոճի գաղտնիքներին հայ մարզիչ մարզիկին ծանոթացրել են Կուբայի ազգային ֆեդերացիայի նախագահ Ռոմիրո Շիրինոն եւ նրա որդին՝ Ռոմիրիտոն: Վ. Գեւորգյանը, որը նաեւ այս նորաստեղծ ոճի ֆեդերացիայի նախագահն է, տեղեկացրեց, որ նոպասակ ունեն ոճը տարածել Հայաստանում: Ոճը ստեղծել է ճապոնացի մեծ ուսուցիչ Կենվա Մաբունին, 1929 թ.-ին:

ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առանց ազգության չեմպիոնները

Աշխարհը փոխվել է: Ազգությունները խառնվել են իրար: Բրիսբենում տեղի ունեցած մարմնամարզության աշխարհի առաջնությունները փաստեցին այդ խառնաշփոթը: Այսպես, Վալերի Բելենկին, որը մեկ տարի առաջ հանդես էր գալիս Ադրբեջանի հավաքականում, Ավստրալիայում ներկայացրեց Գերմանիան: Բայց նրա բախտը չբերեց: Բելենկին ընդամենը մեկ մեդալ շնորհեց Գերմանիային: Բելենկիի դեմ չինաստանցի Լի Դոն Խուանը նույնպես աշխարհի առաջնությունում ներկայացնում էր այլ երկիր Շվեյցարիան: Ավստրիայի հավաքականում հանդես էր գալիս ռումինացի Կատալին Միրկանը: Բելոռուս Սվետլանա Բոգինսկայան տեղափոխվել է Միացյալ Նահանգներ:

Զարմանալի է Վալերի Բելենկիի ճակատագիրը: Նա հանդես էր գալիս Ռուսաստանի երիտասարդական հավաքականում: Երբ չափահաս դարձավ, ընդգրկվեց ԽՍՀՄ գլխավոր հավաքականում, իսկ 1992 թ. ԱՊՀ թիմի կազմում Բարսելոնում տեղի ունեցած օլիմպիական խաղերում նվաճեց մեկ ոսկե մեդալ: 1993 թ. Բելենկին Բիրմինգհեմում (Անգլիա) տեղի ունեցած աշխարհի առաջնությունում հանդես նկավ անձնական անունով եւ միջազգային ֆեդերացիայի դրոշի ներքո: Այն ժամանակ Ադրբեջանը մարմնամարզության միջազգային ֆեդերացիայի անդամ չէր: Անցյալ տարվանից Վալերի Բելենկին արդեն գերմանացի է դարձել:

Վերջին տարիներին Արեւմտյան Եվրոպայի մի շարք երկրներ հետաքրքրությամբ եւ էժան գներով սեփականացնում են նախկին Արեւելյան Եվրոպայի երկրների եւ Խորհրդային Միության մարզիկներին: Զարմանալին այն է, որ Ֆրանսիան մարմնամարզության բնագավառում օտարերկրացի որեւէ մարզիկ չի վերցրել: Ըստ Ֆրանսիայի մարմնամարզության փոխնախագահ հայազգի Արթուր Մաղաքյանի, Ֆրանսիայի կառավարությունը մի քանի օտար մարզիկների, այնուամենայնիվ, քաղաքացիություն է տվել: Ֆրանսիան էլ պետք է դիմի նման քայլերի, որպեսզի մարզական աշխարհի խոշոր տնավաճառներում էժան գներով ձեռք բերված մարզիկների շնորհիվ մեդալներ շահի միջազգային մրցաշարերներում: Գ. Ա.

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սոկկերը կհեղաշրջի՞ ֆուտբոլը

Ինչպես հայտնի է, մարզական բնագավառում ամերիկացիներն իրենց սեփական տեսակետն ունեն: Նրանց ֆուտբոլը, որն անվանվում է սոկկեր, տարբերվում է եվրոպական ֆուտբոլից: Բայց որոշելով սոկկերի օրենքները փոխել, կկարողանա՞ն արդյոք ամերիկացիները մեծ հեղաշրջում կատարել ֆուտբոլում: Սոկկերը իր 15 մլն 200 հազար խաղացողներով չկարողացավ դառնալ ամերիկացիների սիրած խաղերից մեկը եւ չարժանացավ հեռուստաընկերությունների ուշադրությանը: Իրենց նոպատակին հասնելու համար սոկկերի ղեկավարները որոշել են խաղի կանոնները բարելավելով այն դարձնել ավելի գրավիչ: Մինչ ԱՄՆ-ի ֆուտբոլի ղեկավարները պատրաստվում էին 1995 թ. աորիլից կազմակերպել երկրի պրոֆեսիոնալ անդրանիկ առաջնությունը, մի շարք նոր կանոններ փորձարկվում են ավելի ցածր խմբերի մրցումներում: Ամերիկայի 3-րդ դիվիզիոնի նախագահ Ֆրանչեսկո Մարկոսը հայտարարում է. «Սոկկերը պետք է ավելի դինամիկ դարձվի, ավելի շատ գնդակներ խփվեն եւ ավելի գեղեցիկ շարժումներ լինեն»: Դրա համար դարպասների չափերը պետք է մեծացվեն. ներկայիս 732 սմ լայնությունը՝ 244 սմ բարձրությունը պետք է փոխարինվեն 853 սմ լայնությամբ եւ 259 սմ բարձրությամբ: Եթե գնդակը դուրս գա եզրից, ապա ֆուտբոլիստն այն խաղի մեջ պետք է մտցնի ոտքով: Այսօրվա 90 րոպե տեւողությամբ ֆուտբոլը բասկետբոլի պես պետք է փոխարինվի 60 րոպե խաղաժամանակով: Եթե գնդակը դուրս գա անկյունային, ապա այն պետք է իրացվի այն տեղից, որտեղից դուրս է եկել դաշտի սահմաններից: Եթե խաղացողը 5 խախտում կատարի, ապա նրան պետք է փոխարինի ուրիշ խաղացող: Իսկ եթե թիմը 7 խախտում ունենա, ապա մրցակցին պետք է տրվի «11 մետրանոց» հարվածի իրավունք, որը սակայն պետք է իրացվի 32 մ հեռավորությունից: Այս դեպքում հարվածող խաղացողը եւ դարպասապահը իրավունք ունեն վազել իրար դեմ: Այս օրենքների առաջին փորձարկումները պետք է կատարվեն Ամերիկայի 3-րդ դիվիզիոնի առաջնության 350 խաղերում: Վերջում մասնագետները մանրամասն պետք է հետազոտեն արդյունքները:

ԹԻԹԱՆ համաձայն է նման նորաձեւություններին ու փորձարկումներին: Իսկ ԱՄՆ-ի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ եւ աշխարհի վերջին առաջնության կազմկոմիտեի նախագահ Ալան Ռոսենբերգը հույս ունի, որ վերոհիշյալ նորամուծությունները կնպաստեն ֆուտբոլի զարգացմանը: Մնում է հարց տալ, ո՞ր ֆուտբոլի՝ սոկկերի՞, թե սովորական: Գ. Ա.

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

Մոնակոն ֆինանսական դրախտ մարզիկ-միլիոնատերերի համար

ԳԵՎՈՐԳ ԱՍԻՐՅԱՆ
Վալանս, Ֆրանսիա

Մոնակոն, ուր կառավարական տուրքերը շատ ցածր են, մի քանի տարիների ընթացքում մարզիկների համար կատարյալ դրախտ է դարձել: մի նոր Շվեյցարիա: Այս փոքրիկ տարածքի մեջ հաստատվել են աշխարհի ամենաճանաչված մարզիկներից շատերը գեղեցիկ բնակարանում: Միջերկրական ծովի ափին դրախտային տեսարաններով: «Ֆորմուլա-1»-ի աստղերից շատերը վաղուց բնակվում են այս քաղաքում: Տիեր Բուտսենը, Գերհարդ Բերգերը, Ռիկարդո Պատրեզեն, Դավիդ Բրաբհամը, Պիեր Լուիջի Մարտինին, Ջիանին Մարքիտելին, Իվան Կաղեցին, Լեհոն, Նիկոլա Լարինին, Ալեսանդրո Զանարդին, Ժոզի Շրֆերը, Կլայ Ռեգազոնին եւ Ժակի Իմոը:

Թենիսիստներ Բորիս Բեկերը, Գորան Իվանիշեւիչը, Իոն Դիրիակը, Բյորն Բորգը, Գիլերմո Վիլասը նույնպես բնակվում են Մոնակոյում: Այնտեղ աղում են նաեւ լեռնադահուկորդներ Ալբերտ Տոմբան, Ինգեմարս Ստենմարկը, գոլֆ խաղացող Սեվերյանո Բալեստերոսը, հեծանվորդներ Մորենո Արենդին ու Տոնի Ռոմինգերը: Բոլորն էլ սիրում են Կոս դ'Ազուրի հանգիստի կլիման եւ Մոնակոյի կառավարության անտարբերությունը մարզիկների ունեցած կապիտալի հանդեպ: Մոնակոյի կառավարությունն այս աստղերից միայն մի բան է պահանջում աշխարհում բարձր պահել Մոնակոյի անունն ու հմտությունը եւ մի ինչ էլ մասնակցել Մոնակոյի կլանին եւ կազմակերպվող հանդիպումներին: Բայց շատ մարզիկներ տարվա մեջ ընդամենը մի քանի օր են բնակվում Մոնակոյում: Մոնակոն իր դռները փակել է ֆրանսիացիների առջեւ: Այսպես, աշխարհի քառակի չեմպիոն, ավտոտարավարդ Ալեն Պրոստը սփոփված հաստատվեց Շվեյցարիայում, որտեղ նույնպես տարեր Ֆրանսիայի համեմատ շատ ցածր են: Նույն կերպ վարվեց նաեւ բենսիստ Անրի Լեկոնդը: Ոչ մի ֆրանսիացի, որը 1957 թ. առաջ չի բնակվել Մոնակոյում, այս երկրի քաղաքացի դառնալու իրավունք չունի: Իսկ այն մարզիկներ, որոնք այնուամենայնիվ հաստատվել են Մոնակոյում, ունեն մեկ տարվա կամ ժամանակավոր արտոնագրեր: Երեսուն հազար բնակչություն ունեցող այս երկրի քաղաքացի դառնալը շատ դժվար է, գրեթե անհնարին: Եթե դա դժվար չլիներ, Մոնակոյի հարեւանները անբավարար կլինեին միլիոնավոր նոր քաղաքացիների համար, որոնք ուզում են ապրել այս երկրում:

Մոնակոյում ոստայն կատարելը եւ շարունակելը ճանապարհոր: Սա՝ այս երկրի սկզբունքը:

Բաժինը պատրաստեց
ՍՈՒՐԵՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍ

Ապրիլի 7-ին «ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍՈՒՄ» ծաղիկների գները

նարգիզ	10 դրամ	քրիզանթեմ	800 դրամ
պատկառուկ (միմոզա)	50 դրամ	*կլինեն նաեւ*	
մեխակ	150 դրամ	շուշան	
հիրիկ	250 դրամ	դրախտի թռչուն (ստրիլեցիա)	
փողաշուշան (կալա)	350 դրամ	արքայանարգիզ (ամարիլիս)	
վարդ	400, 900, 1200 դրամ	անտուրիում	
խոլորձ (օրխիդեյա)	300, 600 դրամ	բրաշուշան (գլադիոլուս)	
գիպսոֆիլա	700 դրամ	վարդակակաչ	

Ծաղկեփնջերի հետ անվճար կտրվեն ծաղիկների կյանքը երկարացնող դեղամիջոցներ:

եւ ինչպես միշտ յուրահանչյուր 100-րդ գնորդ ստացարկվում է անվճար:

A STYLE

Vir bonus dicendi peritus
(Արժանավոր այրը հմուտ է խոսքի մեջ)
ԿԱՏՈՆ ԱՎԱԳ

- Բազմության առաջ հանդես գալու հմտություն
- Ելույթ ունենալու երկյուղածության հաղթահարում
- Ձերբազատում «խոսել չկարողանալու», «Արտահայտվելու անընդունակության» բարդույթից
- Մտքերը հիմնավորված, հետեւողական եւ նպատակասլաց դարձնելու կարողություն
- Մշակված եւ համոզիչ խոսք
- Բանավոր հաղորդակցման կուլտուրա
- Խոսքի տպավորիչ մատուցման արվեստ
- Ունկնդրի մոտ անհրաժեշտ ըմբռնում, կարծիք եւ վերաբերմունք ձեւավորելու ունակություն

Հիմնականում այս ծրագրի իրականացմանն է նպատակաուղղված «Հոետոր» ՍՊԸ-ի կազմակերպած վեցշաբաթյա ինտենսիվ դասընթացը, որի շրջանակներում էլ դուք կարող եք տիրապետել մեր **առորյա, մասնագիտական, հասարակական** եւ **բաղաքական** կյանքի ամենակիրառական, ամենամասսայական, ուստի եւ ամենակարեւոր շնորհին:
Որպես առաջին քայլ՝ հաղթահարեք ձեզ կաշկանդող՝ թերահավատությունը եւ զանգահարեք մեզ 56-24-41, 56-12-76 կամ ուղղակի դիմեք Պուշկինի 3ա, Հայաստանի ժուռնալիստների միության շենք, 2-րդ հարկ, «Կլոր սեղան»: Աշխատանքային օրերին ժ. 10-17-ը:

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ

ARMINCO

ARMINCO
համակարգչային ցանցը
Ձեզ հնարավորություն է տալիս ինֆորմացիա փոխանակել 20 միլիոնից ավելի՝
INTERNET, BITNET, Compuserve, MCI-mail, AMERICA-ONLINE, SPRINT, AT&T
եւ էաs այլ ցանցերի օգտվողների հետ:

ARMINCO-ն
առաջարկում է հուսալի կապ
RELCOM, IASNET, SOVAM-TELEPORT ROSPAC
եւ նախկին ԽՍՀՄ մնացած բոլոր ցանցերի հետ:

Ձեր էլեկտրոնային նամակը, ֆաքսը, տելեքսը, հեռատիպը կհասցվի մեր մոլորակի ցանկացած կետ մի քանի ռոպեում՝ առանց աղավաղումների:

ARMINCO
- Հայաստանում INTERNET-ի ոլորտային մատակարար
- SOVAN-TELEPORT-ի էքսկլյուզիվ ներկայացուցիչ
- IASNET-ROSPAC ցանցի ռեգիոնալ կենտրոն Հայաստանում

Մեր հասցեն՝
Իսահակյան փ. 28, 3 հարկ, հեռ.՝ 52.63.26,
ֆաքս.՝ 28.50.82, e-mail՝ support arminco. com

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

- Խանութ, 9 հարկանի շենքի 1-ին հարկում: Ընդհանուր մակերեսը 302 քմ.: Նորքի 9-րդ զանգվածում:
- Երկհարկանի սեփական տուն, նորակառույց: Ընդ. մակ. 286 քմ., հողամաս 1000 քմ., Ք. Եղվարդ:
- 1 հարկանի սեփական տուն, ընդ. մակ. 89 քմ., հողամաս 251 քմ., Շահումյան շրջան:

Տեղեկությունների համար զանգահարել. 56-43-21, 56-00-57

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Երկու առանձնատուն, 250 քմ ընդհանուր տնամերձ հողամասով «Ձվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում:

Զանգահարել 58-33-26, 25-25-38

ԿՈՐԵԼ Է

«ՔԱՆԱՔԵՌ-90» կոոպերատիվի կլոր կնիքը:
Համարել անվավեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

Անգլերենի դասավանդում, որպես երկրորդ լեզու
Ծրագիր ավարտական վկայագրի շնորհումով 1995-1996

ՀԱՀ-ն ընդունում է դիմումներ «Անգլերենի դասավանդում, որպես երկրորդ լեզու» ծրագրի համար, որն ավարտելուց հետո կտրվի վկայագիր: Դիմորդները պետք է ունենան համապատասխան բարձրագույն կրթություն՝ անգլերեն լեզու, ժամանակակից լեզուներ կամ լեզվաբանություն: Երկու տարվա մանկավարժական փորձը ցանկալի է:

ՀԱՀ ընդունվելու համար անհրաժեշտ է, որ ընդհանուր գնահատականների միջին գուցանիշը լինի 4,0 եւ բարձր:

Դիմորդները պետք է ներկայացնեն՝

- Դիպլոմի եւ ներդիրի օրինակներ՝ իրենց պատճեններով
- Երեք բնութագիր նամակ.

տեղում լրացնեն դիմումնագիր եւ ֆինանսական հնարավորությունների մասին տեղեկանք:

Կանխավճարը դրամով կազմում է 5 ԱՄՆ դոլլարին հավասարազոր գումար, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս: Փաստաթղթերի հանձնման վերջին ժամկետը սույն թվականի ապրիլի 28-ն է: Դիմորդները, որոնք չունեն 575 կամ բարձր միավորներ TOEFL քննությունից, կմասնակցեն 1995 թ. մայիսին ՀԱՀ-ում կազմակերպվող կարգորոշիչ քննությանը: Վերջնական ընդունելությունը կկատարվի դիմորդների նախորդ ուսումնական տվյալների եւ անգլերեն լեզվի քննության արդյունքների հիման վրա: Ծրագրի տեւողությունը երեք քառորդ է: Այն կսկսվի 1995 թ. սեպտեմբերին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ:
Հասցե՝ Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, 1 հարկ, 19 սենյակ, հեռ. 27-10-85:
ՀԱՀ-ը ռասայական, կրոնական, սեռական կամ ազգային խտրականություն չի ճանաչում

SARTARABAD Co. LTD

«ՍԱՐԴԱՐԱԲԱԴ»-ՍՊԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է

ԵՐԵՎԱՆ-ԲԵՅՐՈՒԹ

ՈՒՂԻՂ ՉՎԵՐԹՈՎ

7 ՕՐՎԱ ԹՐԵՎԱԲՈՂ ՇԱՍԹՈՐԴՈՒԹՅԱՆ

3 աստղանի հյուրանոց Մոսկվայում Լիխոբորիսոմի տեսարժան վայրեր, սնունդ, տրանսֆեր 3 անգամ

14 ՕՐՎԱ ԹՐԵՎԱԲՈՂ ՇԱՍԹՈՐԴՈՒԹՅԱՆ

3 աստղանի հյուրանոց

Անհատական վիզաների եւ այլ փաստաթղթերի ձեւակերպում եւ հաստատում Մոսկվայում:

«ԷՐԵԲՈՒՆԻ» հյուրանոց, 2-րդ մասնաշենք, 327 սենյակ
Հեռ. 565575

A STYLE

ՍՓՅՈՒՌ
տեղեկատու

- անվճար տեղեկություններ ձեռնարկությունների *առաջարկի եւ պահանջարկի* մասին հեռախոսով,
- պարբերաբար վերահրատարակվող *«Հայաստանի ձեռնարկությունների եւ կազմակերպությունների տեղեկագիրք»*,
- գովազդի նոր եւ ամենաարդյունավետ միջոց՝ *նպատակային գովազդ*, այսինքն գովազդային տեսքի անմիջական հաղորդում ձեր պոտենցիալ գնորդին:

Զանգահարել՝ 58 91 67, 58 13 51

ՈՎ ՓՆՏՐՈՒՄ Է, ՆԱ ԿԳՏՆԻ ՄԵՐ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

A STYLE

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Պատվեր 1816 Տպաքանակը՝ 7000 Ստորագրված է տպագրության՝ 6. 04. 1995 Գինը՝ 40 դրամ

digitised by A.R.A.R.@